

„Droschak“

ORGANE
de la Fédération

Revolutionnaire Arménienne.

ԴՐՈՇԱԿ

Adresse:

RÉDACTION DU JOURNAL

„Droschak“

GENÈVE (Suisse)

REVOLUTIONARY
BUREAU
LIBRARY

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՂՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

Պ Ա Շ Տ Պ Ա Ն Ի Ե Ն Ք

Պատմութիւնը յաւիտենական վերսկսումն է, հայոց պատմութիւնը — մասնաւորապէս: Սուր ու ցաւոտ դրւագները վերադառնում են յուսահատեցուցիչ միօրինակութեամբ: Եւ միշտ նոյն ուրոյն, բացառիկ գծերով, որ յատուկ են մեր բացառիկ ճակատագրին:

Ահեղ ու այլազան ուժեր են կուում այդ ճակատագիրը: Պատմութիւնը, աշխարհագրութիւնը, ցեղագրական ու քաղաքակրթական պայմանները դարձնել են այն տխուր, անողորմ, երկաթեայ անհրաժեշտութեան սարդոստայնի մէջ: Եւ սակայն, դրանք բոլորը չեն, այդ ուժերը „նախախնամութեան“ թարգմաններ չեն, միահեծան և տիրական: Կայ բուն գ ու թ ո ս, վ ճ ո ո Ղ ու ժ ը, որ մրափում է դարերից ի վեր կրաւորականութեան անդունդներում, որ մերթ մերթ փայլատակում է կայծակնայի հակադրումներով, որ վաղ թէ ուշ պիտի աջողէ չէզոքացնել և՛ պատմութեան և՛ աշխարհագրութեան, և՛ ցեղագրական ու կուլտուրական բոլոր մահաւիթ տարկանոնութիւնները և յեղաշրջել „ճակատագիրը“, ազատ կեանքի ու ֆիզիքական յարատեւութեան գրաւականներով:

Ժողովուրդների ի մ ա ս տ ու թ իւ ն ը — ահա նրանց ճակատագրի հզորագոյն դարձնելը: Ժողովուրդների միահամուռ, հաւաքական կամեցողութիւնը — ահա մի ուժ, որի գրոհին չի դիմանայ ինքը ամենազոր „նախախնամութիւնը“, „ճակատագիրը“, „Փատուժը“:

Ո՛ւր էր, թէ մեր մէջ հասունացած լինէր այդ կորովի և իմաստուն կամ ե ց ո Ղ ու ժ իւ ն ը: Տաշեղի պէս թաւալում ենք մրրիկների յորձանքներում, առանց հակազդել կարողանալու, առանց հակազդել կամ ե ն ա լ ու լ: Ամեն մի յորձանք վրայ է հասնում աւելի հրժեղու, աւելի թափով, քան նախընթացը և ամեն մէկը գտնում է մեզ յաւիտենորէն նոյն տեղում ցցւած, ծոյլ ու անպատրաստ, հէգ ու աղերսող, Եւ այս վարկեանիս ամեն մի հայի շրթունքի վրայ է նոյն ցաւագին ու հարցական մրմուռը: „Ի՞նչ կը լինէր արդեօր, եթէ աղէտի ալիքն անցնէր աւելի հեռուն, դէպի Բարձր Հայր“:

Այդ հարցն ունի տարաբախտաբար, դեռ այսօր ևս էր ստեղծման ալիք մէջ:

Ոչ որի չը խորագաններ — միմիայն մեզ: Ոչ որ այնքան յանցաւոր չէ մեր կրած տառապանքների մէջ, ինչպէս մենք: Ինչպէս ամբողջ հայ ժողովուրդը, ամբողջ թիւրքաց հայութիւնը: Ի՞նչ արժէք ունին մահաւորական խուժանի դէմ տեղացող ճոռոմ ու ցասկոտ որոտումները: Բողոքեցէք բնութեան մահաբեր տարերքների դէմ: Արգելեցէք հողմերին նիւթել իրենց աւերածները: Սաստեցէք փոթորիկներին, ուրագանին, որ փոխեն իրենց ուղղութիւնը: Խուժանը մի այդպիսի „տարերք“ է, կոյր ու անսիրտ բուժ ու մոլեգին: Նրա դէմ չը բողոքենք — հերիք է: Արդիւնքը զերօ է, միահազգին, կսկծեցուցիչ, յուսահատական դերօ:

Չը բողոքենք և Եւրօպայի դէմ: Ա՛հ, եթէ մեր բոլոր բողոքները բոլոր այդ ջրոտ, հզոր ձիգերը, խկզբանէ մեր ազատագրական պատերազմի առաջին օրերից ի վեր ուղղած լինէինք դէպի միւսնոյն, մեծ, փրկարար, արգասաւոր հոսանքի դաշտը, եթէ համիդեան բռնակալութեան իւրաքանչիւր հայ զօհի մէջ երեսուն տարւայ արհաւիր փորձութիւնների ընթացքում գէթ թոյլ չափով արձարձէր ի ն ք ն ա պ ա շ ա պ ա ն ու թ ա ն ը բ ն ա զ դ ը, մեր ճակատագիրը, անտարակոյս, այսօր այլ կերպ տնօրինւած կը լինէր, մենք չէինք դողայ աշնան տերեւի պէս գահավիժւող փոթորիկների հանդէպ:

Այդպէս չարինք: Չարձարձեցինք այդ փրկարար կրակը և տուժեցինք ահեղօրէն 13—14 տարի առաջ, տուժում ենք այսօր ևս, ո՛վ գիտէ, որքան դեռ պիտի տուժենք ապագայում: Ինչպէ՞ս չը խոսովի հայ յեղափոխականը այդ հոգեմաշ իրողութեան առջև, որ եղել է սկզբից ի վեր նրա հոգսերի ու մտատանջութիւնների ամենացաւոտ առարկան: Եւ ինչո՞ւ զարմանալ, որ 1895—96-ին, խուժանների երկարատեւ նախճիրային գործունէութեան ընթացքում, երբ հայ մարդիկ, հազարաւոր անուական ուժեր, առանց որեւէ դիմադրութեան, նախիրների պէս սպանաւոնց էին առաջնորդւում ու մորթուում, երբ միւսնոյն ժամանակ մի քանի կտրիճ հրացանաւորների մի քանի սրտոտ յեղափոխական երիտասարդների դիմադրութիւնը փրկում էր ամբողջ գիւղեր ու գաւառներ — ինչո՞ւ զարմանալ, որ այդ արտասուելի, դժոխային օրերում, հանդէպ այդ անարգ ու

կամաւոր նահատակութեան, հանդէպ մասսային այդ անօրինակ ոչխարամուտութեան՝ հայ յեղափոխական խմբագրի կրօնքից դուրս էր թռչում զարհուրելի և օրհասական աղաղակը. «անարժան ժողովուրդ, որ խուլ ես մնում ինքնապաշտպանութեան շարունակական հաւարի դիմաց, դէ՛հ, կոտորելի՛ր»...

Այսօր նոյնն ենք: Յեղափոխական փոքրամասնութիւնը — դարձեալ մեն-մենակ, իր սիզիֆեան բեռի հետ, գրեթէ իսպառ մէկուսացած ժողովրդային զանգաճներից, առանց գործօն, արգասաւոր համակրանքի ու աջակցութեան: Ժողովուրդ և յեղափոխական մնում են տարբեր, յաճախ հակամարտ կատեգորիաներ: Որքան մէկը՝ ըմբոստ, շարժուն ու նախաձեռնող, այնքան միւսը՝ անշարժ, կրակօրական և համակերպող: Այդ չարաբախտ հակօրինութիւնը (antinomie) մեր պատմական վերջին շրջանի ամենացայտուն, ամենաաղէտաբեր գծերից մինն է, որ տակաւին յարատւում է. հայ զանգաճը իր խոհերով ու զգացումներով, իր բովանդակ մտավիճակով մինչև օրս նոյն գրանխտեայ ապառաժն է՝ հայ ինտելիգենտ յեղափոխականի օրհասաշունչ ու պաղատագին քարոզների հանդէպ: Տրամաբանօրէն անհեթեթ է թւում մօր ու զաւակի այդ բացարձակ հակադրութիւնը — բայց նա փաստ է, տարաբախտաբար: Վերջին տասն ամսւայ ազատութեան շրջանը — ուր դարևոր ստրկութեան զոհ-համայնքը հնարաւորութիւն ձեռք բերեց ազատօրէն տնօրինելու իր վիճակը և ոչինչ չ'արեց, գրեթէ ոչինչ՝ իր ֆիզիքական գոյութիւնը գեթ մասամբ ապահովելու գալոց ամեն պատահականութիւնների դէմ — աւելի ևս ուժգին շեշտեց այդ ողբալի հակադրութիւնը: Եւ այսօր, երբ ազգովին նստած ենք, կարելի է ասել, ճարձատող հրաբխի վրայ, ենթակայ մի չարաշուք կացութեան՝ յարափոփոխ քմահաճոյքին, — այսօր հայ ժողովրդային ընդհանրութիւնը նոյն իներտ, ճակատագրապաշտ անշարժութիւնն է, գերի-Փատումին, ապաւինած նախախնամութեան, աւետարանին ու բոլոր աստուածներին, որոնցից երբէք չլսեց նա ըմբոստութեան ու մարդկային արժանապատուութեան փրկարար խօսքը, այլ միշտ միայն հնազանդութեան ու նախրային համակերպութեան պատուիրաններ: Տիրացուական մի եղկելի հոգեբանութիւն...

Այդպէս — Տաճկահայաստանում:

Այդպէս չէր հայրենիքի միւս հատուածի մէջ: Գովկասեան հայութիւնը ևս, մի քանի տարի սրանից առաջ կեանքի ու մահուան ձգնաժամ ապրեց: Երկու դրութիւնները, տարբերելով հանգերձ, նման են մի քանի խոշոր գծերով: Այնտեղ ևս, Անդրկովկասում: մի խուճկայոյց, արիւնալի վայրկեանի մէջ — որ տեւեց մէկ ու կէս տարի — մեր դէմ էին ընկալցիայի բոլոր տարրերը. մեր դէմ — կառավարութիւնը, որ վճռել էր հնձել ազգի, ժողովրդի բոլոր կենսունակ ու գիմարական ուժերը.

մեր դէմ — թուրք խուժանը, իր ցեղակից աղաներով, իր հայատեաց մտաւորական առաջնորդներով, որոնք թե թեկի կառավարութեան հետ, վճռել էին հրով ու սրով դուրս մղել հայ կուլտուրական ժողովրդին կովկասեան հօրի՛զ զօններից և հաստատել ընկալցիայի ու վայրենութեան սիրապետութիւնը. մեր դէմ — բոլոր հարևանները, ուսու վրացի ժողովուրդների բոլոր դիշատիչ ու մարդատեաց վիժմունքները, մեր դէմ — նոյնիսկ նրանց ապիկար «իրէօլօզների» մեծամասնութիւնը, որ ուրիշ միջոց չէր գտնում օգնելու հայ հոգեվարք ժողովրդին, բայց եթէ մերկացնել շարունակ «հայկական պրօփօկացիաները», բայց եթէ քարկոծել ու վարկաբեկել հայ-ժողովրդական ինքնապաշտպանութեան միակ մարանչող կազմակերպութիւնը... Բոլորը — մեր դէմ և չը կար նոյնիսկ այդ զարհուրելի տարտարոսում կովկասահայ ժողովրդի համար այն լղարիկ սիոփանքը, յոյսի այն աղօտ ճառագայթը — եւրօպական միջամտութեան հնարաւորութիւնը — որին այսպէս թէ այնպէս ապաւինում է թիւրքաֆաշայը աղէտների վայրկեաններում:

Եւ սակայն, ինչպէ՞ս եղաւ, որ այդ անօրինակ դաւաճութեան զոհը ձողպրեց մէկուկէս տարւայ անհաւասար պատերազմի արհաւիրքներից, նա չ'ընկաւ հարուածի տակ, գեանատարած չ'աղերսեց իր արիւնն ու շոտոսխներին, աշխարհասասան լաց ու բառաչով չը խլացրեց մթնոլորտը, այլ նոյնիսկ տարաւ անմոռանալի յաղթանակներ հակայեղափոխական այդ միլիոնաւոր կազմակերպւած խաժամուժի դէմ, յաղթեց նոյնիսկ այնպիսի գաւառներում, ուր հակառակորդը կազմում էր ճնշող մեծամասնութիւն, ասեղ իր զինաւորութեամբ և հզօր ոստիկանական աջակցութեամբ...

Որովհետեւ, հայ-ժողովրդական իմաստութիւնը այդ միջավայրում յաղթահարել էր իր «Փատումին», հրատեշտ էր տւել ճակատագրապաշտ, մեղկ ու տափակ ներշնչումներին, ըմբռնել էր աշխարհի օրէնքը, գոյութեան ցաւոտ մենամարտի անագորոյն «հրամայականը» և առնական վճռականութեամբ ապաւինել էր իր մարանչող փոքրամասնութեանը, իր անձնուրաց զաւակներին և նրանց փոքրածիւ լէգէօնը վերածել էր համաժողովրդական, լայնատարած բանակի:

Այո, արիւնոտ էպիզօդները յաճախ են կրկնուում մեր պատմութեան մէջ, բայց նրանք անցնում են տարաբախտաբար, անհետեանք՝ թիւրքահայկական գիտակցութեան մակերևոյթից: Ինքնապաշտպանութեան քարոզներն այնտեղ երբէք չեն հնանում, ընդհակառակը ստանում են միշտ նոր ու թարմ այժմէութիւն: Չը յոգնենք, ուրեմն, «հինը» կրկնելուց, և կրկնենք այն մշտնջենաբար, մինչև որ փոթորիկէ սարկամաութեան դպրօցում մարզած, ֆատալիստական թոյնով մշակւած թիւրքաֆաշայ մասսայի գիտակցութիւնը:

Ամբողջ ժողովուրդը միացած իր մարտական կազմա-

կերպով թեան՝ դրօշակի տակ... Ահա՛ ծանրակշիւ մի իրողութիւն, որ փրկեց Ռուսաստանի հայութիւնը Ֆիզիքական ու բարոյական անէացումից: Առանց այդ կազմակերպած ուժի Ռուսահայաստանը պիտի վերածուէր մի հսկայական գերեզմանոցի:

Որքան հրահանգիչ «նախընթացներ» քանի՛ խրատական փորձեր, իրողութիւններ... Յուլիսեան գուշակական օրերին «Պաշտակցութիւնը» շատ չէր օրօրուում սին պատրանքներով: Նրա առջև էր ռուսական յեղափոխութեան ահեղ օրինակը: Նրա համար հակահարածները միանգամայն կօնկրեաւ տրամաբանական հնարաւորութիւն էին Տաճկաստանի պէս մի երկրում: Նա գիտէր թիւրք ամբոխային ընդհանրութեան մտավիճակը, ըմբոստ ամեն նորմուծութեան դէմ գերի հնաւանդ պաշտամունքների, պատրաստ նետելու բոլոր «օտարօտի» շարժումների պատասխանատուութիւնը հայերի վրայ, և նա միջազգային գրկախառնումների ժխտի միջոց հաւանք էր կանչում հայ ժողովրդին կազմակերպել համախմբել ինքնապաշտպանութեան դրօշակի շուրջը: «Զը կայ» գրում էինք անցեալ օգոստոսին նոյն այս էջերում:— Ըր կայ մի այլ պահանջ աւելի հրամայական, քան կազմակերպելու անհրաժեշտութիւնը: Ռեֆորմութիւն կը լինի, եթէ չըմբռնենք այն ոճիր կը լինի, եթէ գիտակցաբար ձեռքից թողնենք այնքան նպաստաւոր վայրկեանը, չ'օգտուենք նաճած ազատութիւններից՝ դարկ տալու համար ժողովրդական կազմակերպման գործին... մենք որ ամենից աւելի պիտի տուժենք բարբարոսութեան յարձակողական վերագարձից»...

Մեր միջավայրը տարաբախտաբար, խել է մեզից լաւատես լինելու ամեն իրական հնարաւորութիւն: Որքան էլ կամենայինք փիլիսոփայ լինել, պարտախոսով վերլուծող անցքերի ու տրամադրութիւնների չենք կարող այնուամենայնիւ զսպել մեր մէջ «հաւանք»-ի այդ նոյն աղաղակը... որովհետեւ Զարհուրանքի ծաւալը ընդունակ է մինչև աղիքները ցնցելու ամենամանխոով փիլիսոփային անգամ որովհետեւ ապագան, հեռապատկերը դեռ չափազանց մշուշապատ է թէական, պրօբլեմատիկ, որովհետեւ նոր ըէժիմն իսկ տակաւին չի թօթափել իր վրայից հնութեան փոշին...

Վուզէինք, ահա՛ ներշնչել խոր անկեղծ անվերապահ հաւատով գէպի այդ նոր ըէժիմը, որի հետ կապած ենք մեր կուսակցական ու ազգայնական էութեամբ, որի անունով զոհաբերել ենք այնքան կեանքեր: Սակայն, ինչ ենք տեսնում: Զարդերից ի վեր սահմանադրական կառավարութեան բռնած ընթացքը տարաբախտաբար, չի կարող քաջալերել մեզ: Այդտեղ երկչոտութիւնն ու աչառութիւնը— կանոն են և հայ երկրի արիւնաներկ տեսարանների հանդէպ մենք չենք տեսնում իշխող-

ների մէջ այն սրտացաւ տրամադրութիւնը, որ անհրաժեշտ էր ոճիրների քառութեան ու յօշոտած ժողովրդի հոգեկան վերակազդուրման համար: Այնոր կառավարութեանը հաճելի է, ըստ երևոյթին, նահատակութեան նոր խարոյկներ բարձրացնել հայերի համար: Տխուր, շարագործ հակասութիւն: Ամբողջ աշխարհը, իրենք իսկ թիւրքերը գիտէին ու բարձրաձայն հռչակում են երկու ամսից ի վեր, որ Ալիլիկոյ ողբերգութիւնը մի մասն է յետագիմական ըստատարած դաւադրութեան կազմակերպած համիդիական ձեռքերով, ինքը մեծ վիզիրը հանդիսաւորապէս յայտարարեց այն իր ծրագրային ճառի մէջ, և սակայն, նոյն սահմանադրական աղբիւրներից հրապարակ նետեց նաև հրեշտակաւոր ամբաստանութիւնը հայ տարրի, հայ յեղափոխականների, մեղսակցութեան մասին: նոյն ժամանակ երբ Հիլմի փաշան պարլամենտական ամբոխից հանրային ուշադրութեանն էր մատնում հայաջինջ դաւերի ճշմարիտ հեղինակներին, երբ Ֆերիդ փաշան գրաւոր կերպով հաղորդում էր մեր խմբագրութեանը, թէ հայերը չեն մեղադրուում այդ նոյն ժամանակ Պարիզի օսմանեան դեսպանատունը, ծանուցանում էր Փրանսիական մեծ օրգանի մէջ թէ կոտորածի պատասխանատուութիւնները բաժանուում են հայի ու թիւրքի մէջ: Եւ որպիսի տենդոտ աճապարանք միաժամանակ նւագեցնելու հայկական աղէտի ծաւալը և շլացնելու Եւրօպային «յօքնութեան» պալիտիկաներով... «Պէտք է անպատճառ «բաժանել» մեզը— թէկուզ ընդդէմ առողջ դատողութեան, թէկուզ ընդդէմ ամենատարական արդարութեան: Պէտք է բաժանել— այդպէս էր որոշել սահմանադրական կառավարութիւնը արդէն սկզբից: Արեւի է միթէ պատժել միմիայն «հաւատացեալներին», կարելի է խնայել հայ «Ֆեդայիներին»... Ադրինուպօլսի զինւորները Ադանա գնալով, խուժաններին զսպելու տեղ, սարքեցին հայոց արեան նոր բաղանիքներ, այդ բաւական չէր, պէտք էր լրացնել պատկերը և ահա նոր դահլիճը հրահանգեց հարիւրաւոր հայ մարդկանց բանտարկութիւն, ինքնապաշտպան գաւառների զինաթափում ու ի վերջոյ, ահա մահաւան դատաւիճիւններ մի շարք հայերի դէմ, ահա և հայկական կախաղաններ...

Անտարակոյս, «ազգել է» Բ. Գրան վրայ Ադանայի ջարդարանների սպանւնալիքը «ընչէլ ամբողջ հայութիւնը, եթէ Պուրը շարունակէ իր խստութիւնները հաւատացեալների դէմ»: Արեւի է և յօրինել այդ տեսակ սպանւնալիքներ, արդարացնելու համար յաչս Եւրօպայի մի թուրկամորթ ու վեհերօտ քաղաքականութիւն... Արեւի է և կոխել անմեղ հայերի մահմեդականներին հանգստացնելու նպատակով...

Այդպէս ահա նոր ըէժիմը հակասական ու վարանոտ իր ընթացքով գալիս է սառը ջուր մաղելու ամենալա-

ւատես տրամադրութիւնների վրայ նա չի կամենում բացարձակապէս ու վճռականօրէն խզել հնաւանդ մեթոդների հետ՝ հայ բազմատանջ ժողովրդի հանդէպ: Այդ վերջինի յուսախաբութիւնը, որ արդէն աւազտ սնունդ էր ստացել վերջին 10 ամսւայ արտասուելի փորձերի ընթացքում, — շարունակուում է...

Գիտենք, անշուշտ, որ կան երիտասարդ-թիւրք շարքերում շիտակ, աննենգ, ամբողջական հոգիներ ևս, ներշնչւած ճշմարիտ լիբերալիզմի հրահանգներով, տագորւած և կայրութեան ամենակենսական շահերի գիտակցութեամբ, — մարդիկ, որոնց սիրտը կսկծում է ի տես հայոց անհասնում մարտիրոսութեան, որոնք ոչինչ անպատեհութիւն ու ծայրայեղութիւն չեն գտնում հայկական պահանջների մէջ, որոնք պատրաստ են անկեղծ, սրտաբաց, եղբայրաբար գործակցել մեզ՝ ընդհանուր հայրենիքի վերածնութեան աշխատանքում: Նրանք առայժմ թւում անշնչան են՝ տասնեակ միլիոնաւոր մահացողական ընդհանրութեան մէջ...

Թե տանք այդ գիտակից, հասուն ու գաղափարական փոքրամասնութեանը և ձգտենք ընդհանուր ուժերով առաջն առնել նոր արիւննալի փորձութիւնները:

Բայց ամենից առաջ զարկ տանք ուրոյն նախաձեռնութեան, ամենից առաջ ապաւինենք մեր սեփական ուժերին: Արող են հասնել օրհասական նոր վայրկեաններ, երբ այդ թոյլ փոքրամասնութիւնն իսկ կը չէզոքանայ, անզօր կը լինի հակադրելու և մենք կը մնանք բացարձակապէս մեն-մենակ յարձակողական հողմերի դիմաց, ինչպէս Աիլիկիայում... Աչքերնիս չը գոցենք իրականութեան հանդէպ: Այդ իրականութիւնը — միշտ Անձանօթն է ու Արհաւրալին: Նա միշտ յղի է հնարաւոր ու անհնարին անակնկալներով: Երբուն է թէ ներքին և թէ արտաքին կացութիւնը, քաղաքական հօրիզօնը մթազնած է փոթորկաշունչ ամպերով: Գաւեր կովկասեան ու պարսկական սահմաններում, դաւեր ու ընդհարումներ Պարսկաստանի մէջ՝ միջպետական մրցակցութեան շուրջը, տաճկական միջամտութիւններ, ցարի ու կայսերի առեղծաածային տեսակցութիւն, ռուսական խորհրդաւոր մեքենայութիւններ ամենուրեք, ռուս-թրքական ընդհարումի հեռանկար...

Ներսը — աւելի ալէժուփ ու ասաւոր: Ահա կրետական ինդիքը վերստին հրապարակի վրայ և նոր ըէժիմի պաղ ու անհաշտ դիրքի հանդէպ ամբողջ յոյն աշխարհը ալէկօժւած ու բողբօղ: Թիւրքիոյ յոյները նոյնպէս յոգնած իշխող տարրի գիկատարութիւնից, նոյնպէս ուժգին խմորումի մէջ: Արաբական Եմենը շարունակում է որոտալ, ի ցոյց դնելով աշխարհի առաջ իր անյաղթելի կենտրոնատեսալ ախորժակները: Ըարունակական յուզման մէջ է և Ալբանիան, ասպատակային խմբերը նորէն անհաշտ, սպառազինւած բեմ են գալիս Մակեդօնիայում: Ահա միւս կողմից՝ պառաւ, զառա-

մեալ: Տաճկաստանը — իր բաշիբօզուկ խուժաններով, շարիաթապաշտ սօֆիստներով, փաթթօղաւոր ճիւղներով — որ դեռ հեռու է կապիտալիստիօնից, անձնատուութիւնից, որ մշտապէս դաւում է սահմանադրութեան ու ազատութեան դէմ, որ սպասում է պատեհ վայրկեանի, որպէսզի վագրի մորեգին ոստիւնով նորէն գրոհ տայ ազատասէր ու անպաշտպան «գեպուրի» դէմ...

Ո՞ւմ մտքից կարող են խուսափել այդ չարատանջ խորհրդածութիւնները: Բոլոր սրտով մենք կը բաղձանք, որ անձեռնմխելի, անխախտ մնայ քաղաքական մեր իդէալը — ազատ ու անկախ Տաճկաստանը, իրաւահասար ու դաշնակից ժողովուրդներով: Բոլոր ուժով կը ջանանք, ձեռք ձեռքի տւած սահմանադրական բանակի հետ, ապահովել երկրի առողջ ու բնականոն զարգացումը: Բայց մեր կամքը և մեր ճիգերը չեն բաւի ախորժակների այդ կատաղի, ոլորտապտոյտ յորձանքի դէմ, ուր կարող ենք ինքներս սուղել ու գահալիժել դէպի անդարձ կորստեան անդունդ: Արդէն իսկ ջարդերը շարունակուում են ընդհատ-ընդհատ, մանր ծաւալով երկրի բոլոր անկիւններում և կենտրոնական կառավարութիւնը — կամ ասենք՝ կառավարութիւնները որովհետեւ, իրօք, մի քանի իշխանութիւն կայ ներկայումս օսմանեան կայսրութեան մէջ, շատ թէ քիչ իրարից անկախ, շատ թէ քիչ իրարու հակամարտ, մի կողմից պաշտօնական կառավարութիւնը, միւս կողմից «Իթթի-հատը», միւս կողմից Շէյքէթ փաշան — նրանք բոլորն էլ ըստ երևոյթին, անզօր են սահմանադրական օրէնքի ուժը բանադրելու ամենուրեք: Եւրօպան էլ վստահութեան քէ է տւել — գէթ առ երևոյթս — երիտասարդ Թիւրքիային և տրամադիր չէ երևում միջամտելու, անգամ աւերիչ կատաստրօֆների վայրկեաններին... Ո՞ւր է մղում իրերի այս չարագուշակ, ձակասագրական ընթացքը... Եւրաքանչիւր մի կատաստրօֆ իր բոլոր կատաղութեամբ պայթելու է հայի գլխին, իւրաքանչիւրը պարզելու է նրա առջև բնաջնջման նոր անդունդ: Այդտեղ է մեր եզակի տրագիկը...

Ինչ որ կարող ենք անել այդ անդունդը կանխելու համար, անենք շուտով, և անենք ազգովին, հաւաքականօրէն: Մեր բացառիկ կացութիւնը՝ յարատւում է և մենք ոչ միայն դրա հանդէպ չենք ձեռնարկում բացառիկ միջոցների, այլ նոյնիսկ չենք կատարում անհրաժեշտագոյն *measures* — մեր հաւաքական պարտաւորութիւնների: Ազգութեան պահանջութեան խնդիր է դրւած մեր առաջ և ժամանակ է վերջապէս — այժմ, նոր, սահմանագրական գոյութեան արշալոյսին — մշակելու բանաւոր ու աննական ազգային քաղաքականութիւն... Նա պէտք է մշակել համաձայն ընդհանուր տիեզերական բարոյագիտութեան «իմպերատիվներին», հրամայականներին: Նրա գերագոյն «իմպերատիվ» պէտք է լինի — հաւաքական ինքնապաշտպանութիւն, իր բոլոր իրաւունքը:

ներով ու միջոցներով: Այդ զի կարող խել մեզնից այդ սրբազան իրաւունքը: Բոլոր ուժով պէտք է բողոքել զինսթաիուժեան այն փորձերի դէմ, որ կատարուում են Չէյթուժեան, Չոր-Մարզեան ու այլ սակաւաթիւ ինքնապաշտպան հայ կենտրոններում: Եթէ անգամ միաժամանակ կամենան ու աջողեն զինսթաի անել շրջանների խլամուժիւնը— դա մեզ համար երաշխաւորութիւն չէ... Արիտիքական վարկեաններին, երբ մարդասպան ու խուժարուժ բնագոյները, այս կամ այն միջոցով, կամ քաղաքական նոր տազնապի առիթով, նորէն ազատ թողնու կ'առնեն,— մասնագրական խուժարը դարձեալ իսկոյն բեմ կը նետուի լիակատար սպառազինութեամբ և միշտ էլ կը գտնուի մի ապիկար պաշտօնեայ, որ բաց կ'անէ խուժարանի առջև տէրունական զինարանները: Մինչև որ պաշտօնեութիւնը ամբողջ օսմանեան կայսրութեան մէջ հիմնականապէս չը զուլի մինչև որ վարչութիւնը բոլոր հայաբնակ գաւառներում չը տրուի բացարձակապէս յուսալի և զօրաւոր ձեռքերի մէջ— անկարելի է արգելք դնել հայ ժողովրդի զինաւորութեան պահանջներին, առանց չարաչար վտանգելու նրա գոյութիւնը: Այդ մասին է, որ պիտի մտածեն հայ ու տաճիկ սահմանագրական շրջանները, աշխատելով միաժամանակ փշրել մի քանի իշխողների անվճռական, վարանոտ դիրքը զինաւորութեան ծանրակշիւ խնդրի դիմաց, աշխատելով ըստ կարելոյն շուտ մղել հայ տարրը կայսրութեան բանակի մէջ:

Երեկեայ ջարդի սրտաձմիկ իրողութիւններն են, որ հարկադրում են բոլոր ուժով ծանրանալ այդ էական ու ազդակող պահանջների վրայ: Մենք տեսանք, թէ ինչպէս մակերօժան հօրիցօններից առաքւած զօրքը «խաղաղացրեց» Ադանան: Նա տեսաւ, որ մուսուլման խուժանից ևս կոտորած էին հայ ինքնապաշտպան գնդակներով, տեսաւ նաև, որ ինքնապաշտպան հայ խմբերը, տեղի տալով հիւպատոսական թախանձանքներին, յանձնել էին իրենց զէնքերը — օ՛ հնաւանդ, անուղղելի միամտութիւն— և ահա խաղաղարար զօրքը, մոռացած իր առաքելութիւնը, փոթորկւած մասնագրական դիակների տեսարանով, գրոհ տւեց անպաշտպան հայութեան վրայ և յորինեց այնպիսի զարհուրանքներ, որոնց առջև նսեմանում են Սասունը և Ուրֆան... Ասրելի է արդեօք մոռանալ այդպիսի աղէխարը նախընթացներ...

Ի՞նչ են ուզում մեր իշխողները: Ինչու են այդպէս աճապարանքով զինսթաի անում արդէն իսկ անգէն հայութիւնը: Ինչից են վախենում հայկական սպստաբուժիւնից: Հայաստանի անջատումից, սեպարատիզմից... Բայց մենք չափազանց միամիտ կը լինէինք ենթադրել թէ նրանք հաւատում են այդ առասպել-ուրւակաւաններին: Ի՞նչ է ուզում, ուրեմն, Հիլմի ու Ֆերիտ փաշաների կատարութիւնը: Եւ ինչու են վրդովուում և Պոլսի

թիւրք օրգանները, երբ Գաշնակցութիւնը կամ «Գրոշակը» բողոքի ձայն են բարձրացնում ակներև անարգարութիւնների ու զրպարտութիւնների դէմ: Չգուցիկ յետ ենք մղում ոճանց կողմից մեզ վերագրած «պրօփօկասիօնի», «գրգռումի» ձգտումները: Մենք ինքներս ենք պատերազմում ամեն կարգի պրօփօկաստօրների դէմ, և մեզ համար կը լինէր բացարձակ ինքնասպանութիւն, եթէ ստանձնէինք նրանց դերը: Երանի թէ բոլոր մարմինները իբրև ուղեցոյց ունենային այն շիտակ լոյտալ ընթացքը, որին հետևում է Գաշնակցութիւնը միջկուսակցային իր քաղաքականութեան մէջ և հանդէպ Սահմանագրութեան: Այդ շիտակութիւնն իսկ պահանջում է մերկացնել յայտնի արատներ, ջրել ստայօգ լուրերն ու չարագործ գաղտասուքները: Եւ երբ մենք շարունակ յորդորում ենք մեր ժողովրդին դէպի ինքնապաշտպանութիւն, բնաւ չենք գնում մեր ընդունած յանձնառութիւնների դէմ, ընդհակառակը, վարժում ենք յօգուտ ազգամիջեան համերաշխութեան ամրապնդման ու բարգաւաճման:

Թարձակողական ու գրգռիչ անօրժակներով չենք տարել երբէք, բայց չենք էլ կարող թոյլ տալ, որ խուժանային բարբառութիւնները յաւիտենականան մեր երկրում, շնորհիւ կառավարութիւնների երկչոտ, թուլամորթ, յաճախ երկդիմի քաղաքականութեան: Պէտք է ապրեցնել այդ դժբախտ, արիւնաբամ ժողովուրդը, որ լաւագոյն շաղախն է փոքր-ասիական հօրիցօններում նոր կեանքի ու ըէժիմի համար և որին բոլոր սանդաքամեան ուժերը ձգտում են վերջնականապէս գետնին փռել, յօշոտել, բնաջնջել:

Պէտք է կանխել նոր աղէտները, հաւաքական, կազմակերպւած ուժերով: Ազգակերպութիւնը վաղուց արդէն հրապարակի վրայ է և փաղուց նա կոչ է անում բոլոր գործօն, ժողովրդատէր կամքերին: Մենք կանչում ենք մի անսովոր, գուցէ չը տեսնած, համահայկական ճգնաժամի առջև նրա արհաւիրքը տարածում է Ադանայից մինչև Երևան, մինչև Սալմաստ ու Ասպպուրական... Մի չափազանց վտանգաւոր կացութիւն, որ հրահանգում է ուժերի արտակարգ լարումն ու աչալուրջ հսկողութիւն...

Այս ծանր օրերի մէջ ահագին է հայ ղեկավար շրջանների ու երիտասարդութեան պատասխանատուութիւնը: Նրանցից պահանջում է անսահման տակաւ ու ծայրայեղ շրջահայեցութիւն: Նրանց իւրաքանչիւր մի քայլը պիտի չափւած, կռուած լինի, համաձայն միջավայրի չարաշուք անհրաժեշտութիւնների... Չգոյ՛ հանդէպ անգիտակից ամբոխների, որոնք պատրաստ են ձեր իւրաքանչիւր մի ժեստը թարս ըմբռնել, մեկնաբանել միշտ ի վնաս ձեր բարեմտութեան ու շիտակութեան... Այո, աւաղ, կուրտուրայի ու մարդկայնութեան ամենատարրական

պատւիրաններն իսկ մենք ստիպւած ենք բարոզել ամենաճարայեղ զգուշաւորութեամբ: Երբէք, մանաւանդ, թող չը լսել «վրէժի» ձայնը հայ գործող երիտասարդութեան մէջ: Դա վայրենիներին, բարբարոսներին արժանի զէնք է և չը պիտի թող տանք մեզ—անգամ Դանտեան դժոխքի սարսափներից յետոյ — վար իջնել մինչև ջարդարար խուժանների բարոյական մակերևոյթը: Ո՛չ, հեռու վրէժխնդրութիւնը: Թող դրա տեղ հնչէ ամենուրեք ինքնապաշտպանութեան զոգանջը, որ աշխարհի օրէնքն է, տիեզերական փրկարար բնազդը, յատուկ բոլոր անասուններին ու ասուններին: Այդ բնազդը մենք այն տակաւին արծարծելու հարկի մէջ ենք, տարաբախտաբար:

Շտապենք: Հասարակական ազգային կեանքի բոլոր օրինական գործօնները պիտի միանան ինքնօգնութեան գրոշակի շուրջը: Պէտք է ցնցել, վերջապէս դաւաճան ու մահաբեր անշարժութիւնը: Հայ ազգը կամ պիտի ապրի բանաւոր ու պատւաւոր գոյութեամբ, կամ թէ բնաւ չը պիտի ապրի: Հայ ժողովուրդը կամ պիտի դառնայ մարտական մի համայնք, կարող ինքզինքը պաշտպանելու, կամ թէ իսպառ պիտի չքանայ երկրի երեսից:

Թ Ի Ի Ր Ք Ի Ա

Կ Ի Լ Ի Կ Ե Ա Ն Ս Ա Ր Ս Ա Փ Ն Ե Ր

Ստանա, 6 մայիս

Պարագաներու բերմամբ չէինք կրցած մանրամասն կերպով նկարագրել այն ահարկու աղէտը, որուն զոհ գնաց դժբախտ Ստանան: Հուրը, թուրը, թալանը ու ամեն տեսակ սրբապղծութիւն այսքան սաստիկութեամբ չէին անցած ոչ մէկ երկրի վրայէն: Այսօր Ստանան գերեզմանոց ու մոխրակոյտ մըն է միայն: Փողոցները լեցուն են դիակներով ու փրատակներով: Գրեթէ ամեն օր պէլէտիյէի կառքերը դիակ կը կրեն Սիհոն: Հայու արիւնը ներկեց Սիհոնը ու դիակները Միջերկրականն են արդէն:

Զարդի չորեքշաբթի ապրիլ 1 14-ին սկսելը և Պոլսոյ ապրիլ 13-ի դէպքերը պատահական զուգարկիւթիւններ չեն: Բնականաբար Երլըզը մեծ դեր խաղաց Ստանայի ջարդին մէջ: Հոս կարելի եղածին չափ համառօտ կերպիւ պիտի նկարագրեմ դէպքը:

Մարտ ամսան մէջ քանի մը թիւրք սրիկաներ հայ երիտասարդի մը վրայ յարձակելով զայն սպանելու չափ ծեծած էին: Հայը կը բողբէ կառավարութեան ձօն, դժբախտաբար կառավարութիւնը շատոնց իր հեղինակութիւնը կորսնցուցած էր: Ստանայի կոնսակալը — որ ջարդի հեղինակներէն մէկն է — թող մէկն էր, ուր կարողութենէ զուրկ լինելով իր անգործութեամբ Ստանայի ղեակիօնները ազդեցութեան տակ ինկած էր: Արեւիչեալ թիւրքերը կառավարութեան թուրութենէն երես ու համարձակութիւն առնելով հայ տղուն վրայ կը յարձակին կրկին ու զայն սպանելու կը ձեռնարկեն, պառալով թէ կառավարութեան դիմելով ինչ շահեցաւ տղան իր անձը պաշտպանելով այդ երիտասարդներէն երեքը կը վերադրէ: Արաւորեալ թիւրքերէն երկուքը կը մեռնին մի քանի օր վերջը, ասոր վրայ յուզումը կակնի թիւրք շրջաններուն մէջ: Բացէ ի բաց կը պոռային թէ կեաւոր մը ինչպէս կրնայ սպանել երկու թիւրք:

կակնին թիւրք խուժանին մոլեռանդութիւնը գրգռել: Արդէն այդ օրերը տարաձայնութիւն կար թէ Պոլսէն քանի մը ղեակիօնները հասած են Ստանա:

Ապրիլ 13 (երեքշաբթի) դիշերը կառավարական պաշտօնատան առջև խուժն բազմութիւն մը խուճած է, ամենքն ալ փաթթոյաւոր, ու հօճա մը քարոզելով խուժանը դըրդուած է, որպէսզի անմիջապէս սկսեն կեաւորները ջարդել: Խուժանը այդտեղէն ցրելով Ստանայի Սասթխանէին ձօն կը հանդիպին հայու մը ու անմիջապէս կրսպանեն զայն: Հետեւեալ առտուն չորեքշաբթի (ապրիլ 14) արդէն բոլոր թիւրքերը փաթթոյաւոր են, ինչ որ շատ նշանակալից է: Խուժանը կակնի յարձակիլ Թօսպաղը Գալսար թաղը (երկու թիւրք սպաննող երիտասարդ հայուն բնակած թաղը) ու հանդիպած հայը վերադարձը: Քէմեր ալթը ճամփն, քէչէճիլէր պաշը, Սալճալար, Խօրթան մահապէս արդէն խուճած են փաթթոյաւոր թիւրքերով:

Միւս կողմէն թիւրք երևելիները հայ վաճառականները կանչելով կը յորդորեն որպէսզի իրենց խանութները բանան, Այդ օրը Չատիկ չորրորդ օրը և քիչ սըն ալ վախի պատճառով վաճառականները չէին համարձակած խանութնին բանայ: Կուսակալը (Ճէվատ պէյ, մապէյնէն) ու թիւրք երևելիները կակնի հայերը յորդորել խանութները բանալ տալու համար, սակայն, այս միջոցին (ժամը 4 ու կէս) ջարդը կակնի կամաց կամաց: Թիւրք խուժանը մարթինով, ատրիճանակով, բիրով, թուրով ու դաշոյնով զինուած սկսած էր ջարդել հայերը բայց շուկան բազմութիւն չկար տակաւին:

Վալին նստած էր Թաշ մաղազա, ինչպէս նաև թիւրք ու հայ երևելիները: Ասոնք տեսնելով որ գործը ուրիշ կերպարանք կստանայ, կամաց կամաց կը ցրին: Այդ միջոցին Դաւիթ էֆ. Ուրֆալեանը (անդամ եղեռնադատ ատենի) կապանի թիւրք շրջելու գրողմովը: Առաջնորդական փոխանորդը կառավարական պաշտօնատուն կը փակէ ընկերակցութեամբ վալին ու դօմանտանի: Նոյն միջոցին պէլէտիյէի մէջ կապանի Զարութիւն էֆ. Շատիկեանը, նոյնիսկ ի ներկայութեան կուսակալ Ճէվատ պէյի:

Ժամը 5-ին հրացանաձուլութիւնը այլևս սկսած է ամեն կողմ թիւրք խուժանը կը յարձակի հայ թաղերուն վրայ, բայց հայերը ինքնապաշտպանութեան համար անմիջապէս իրենց տունները կը քաշին ու թիւրքերուն կը յայտարարեն, որ եթէ յարձակին, իրենք ալ զէնք պիտի գործածեն: ասոր վրայ թիւրքերը երենց թաղերը կը քաշին: Խուժանին մի մեծ մասն ալ արդէն փճացուցած ըլլալով Ենի մահապէս, Շապանիյէն և քաղաքի դուրսը գտնուող մէկ քանի հայ թաղեր, կակնի շուկայի թալանը: Բոլոր խանութները թալուած են, բոլոր գրամարկիւները կտրուած:

Թիւրք խուժանը իր մ է թ է ի զ ը հաստատած էր կամուրջը գլուխը, Սալճալարէն: Կասուրջէն քաղաք մտնող բոլոր հայերը ջարդուեցան և ինչ ստակալ տանջանքներով անկարելի է երևակայել: Բոլոր դիակները նետուեցան Սիհոն գետը:

Իբր թէ Ստանա գտնուող խուժանը ու գործերը չէին բաւեր ջարդելու համար հայերը, անմիջապէս Գարաշէնլու գաշան հեռագրելով այդ տեղի ղեակիօններն ալ բերին: Անշուշտ թիւրք կառավարութիւնը պիտի հերքէ գործին մասնակցութիւնը, բայց մենք կրնանք դրականապէս սպասուցանել այդ վերադարձներուն մեծ մասը կը կրեն մարթիին ու մաղէր հրացաններու հետքերը: Եթէ հայերս կը ստենք, վկայ են անգլ. հիւպատոսը, Ժէզուիթները, սեօները, օտարները, յոյները ևլն:

Միևնոյն ժամուն ու աւելի կանուխ ջարդը կակնի գիւղերու մէջ: Թիւրք, չէրքէզ, չէչէն ձիաւորներ հազարաւորներով կը յարձակին հայ գիւղերուն վրայ ու կը ջարդեն ինքնապաշտպանութենէ զուրկ խեղճ ու անպատրաստ հայերը: Զարձակողներուն ամենքն ալ նմանապէս փաթթոյ կը կրեն: Իրենց նշանաբանն էր փաթթոյն է, մեծէն մինչև փոքր փաթթոյ կրած էին:

Զարդը շարունակեց մինչև ուրբաթ (ապրիլ 16) ժամը 5-ին: Հրացանաձուլութիւնը դիշեր ցերեկ չէր դադարէր: Բոլոր վերայէթին մէջ հազարաւորներ սպանուած են:

որոշ վիճակագրութիւն չէ կարելի պատրաստել անկարելի է աւելցնել: Ատանայի շրջակայ բոլոր գիւղերը բնակչութիւնը կ'ունենայ ընդամենը 25-ի թիւը: Եւ թող ինչպէս որ անհամար անհամար սկսած մինչև ծերունիք անխնայ սուրի անցուցած են: Բոլոր աղարարները, բոլոր տունները կրակի տւած ու անասունները, կահարարները և ընթացքով թաւան են: Ինձերից, Ապուղլու, Կէմիտիւրէն, Շէյն-Մուրատ, Սադրըլը, Գայրուր և ընդհանրապէս մոտակայքեր են այսօր:

Ինչպէս ըսինք, շարժը շարունակեց մինչև ապրիլ 16 ուր բաժնի ժամը 5 ժեզուիթներու, ամերիկեան միսիօնարներու և այլնի միջնորդութեամբ հաստութիւն մը գոյացաւ, զոր թիւրքերը կ'անւանէին անժամանակեայ գիւղացիները: Հաշտութիւնը (!!) կը բացուէր սա պայմանով, որ հայերը յանձնեն իրենց բոլոր զէնքերը, ինչ որ հայերը կատարեցին ամենայն յօտարութեամբ: սակայն, տուններու մէջ մուշակած զէնքեր ալ գտնուեցան, որոնք պատրուակ եղան ապրիլ 25-ի երկրորդ ահաբեկ: Չորրէն և մեծ հրդեհներ:

Ապրիլ 16-էն մինչև ապրիլ 25 կիրակի ժամը 10-ին ամերիկեան խնամքի թիւրքերը կ'արդարեւ իր կար կառավարութիւնը օրական 10—15 պարի արկը կը բաշխէր ժողովուրդին: Չէմպրոնի տունը, ժեզուիթներու եկեղեցին ու դպրոցը, սէօն երու աղջկանց վարժարանը, ամերիկեան աղջկանց դպրոցը, Ս. Ատուածածին և Ս. Ստեփանոս եկեղեցիները, հայ-հունականներու եկեղեցին ու հայ-բողոքականներու ժողովարանը, Մուշեղեան ու Աշիկեան վարժարանները, Թրիփանի եղբայրներու ու գերմանացիներու գործարանները և ընդհանրապէս տունները ապաստանած ընտանիքներ ալ կը գտնուէին:

Հոս չմտնանք երակտագիտական յարգանք մը մատուցանել ժեզուիթ հայրերուն, Թրիփանի եղբայրներուն, ամերիկեան միսիօնարներուն, Թերզեան գերապայծառին, հայ-բողոքականներու աղագետին, անգլ. հիւպատոսին ու գերմանացիներուն, որոնք ամեն մէկը պահպանեցին հրեշտակի մը պէս կը մխթարէր խեղճ ժողովուրդը:

Ապրիլ 16-էն ապրիլ 25 ժամանակամիջոցին թիւրքերն սկսած էին արդէն շրջի հայ թաղերը ու նախատալից վարժարանը ունէին հայերու հանդէպ, մեծէն մինչև փոքր փաթիլները չէին հանձն: Ապրիլ 25-ին, ժամը 10 ու կեսին (կիրակի) յանկարծակի կերպով խուճապ մը կ'սկսէր ու ժողովուրդը փողոցներուն մէջ խուճաբամ կը վազէր: Պատճառը դիտող չկայ, իբր թէ հրացան մը նետուած է, ոմանք ալ ըսին թէ գոմէջ մը խենդացած է ժամը 11-ին հրացանաձուլութիւնը կակի, այս անգամ մտուղի հրացաններու զնդակներն են, որ կը սուրան ամեն կողմ: զինուորներն են, որ կարճակէն արդէն բոլոր փողոցներու անկիւնը պահակներ դրած են, որոնք կակիին հրացանաձուլութիւնը: Ժողովուրդը պատճառը կը հարցնէ, կրնան թէ բան մը չկայ: Մուշեղ կոխելուն պէս հրացանաձուլութիւնը կը թռչնայ ու հրդեհը կակի: բոլոր հայ թաղը կրակի մէջ է, Մուշեղեանը, Ստեփանեան եկեղեցին Շահպանա-Քէշիշեաններու մտազան և ընդհանրապէս և զիմացի-որահներուն մէջ գիւղերէն ու շրջակայ թաղերէն ազատող վիրաւորեալներ կը պառկէին 1100-ի չափ: կրակը սկսելուն պէս կը փախչին դուրս, բայց աւաղ, այս անգամ մտուղիի զնդակներն են, որ զերենք կը հետապնդեն: 1100 հրդեհէն 80—90-ի չափ հազու ազատուեցան: Մէկ մասը կրակի մէջ այրեցաւ, միւս մասը զինուորներու կողմէ զնդակահար եղաւ: Անշուշտ կառավարութիւնը պիտի հերքէ ասանք:

Հրդեհը շարունակեց երկու երեք օր ու բոլոր հայ թաղը բնակչից զրու կը եկեղեցիով, իր դպրոցներով, իր բնտանիքներով, այնպէս որ այսօր 15—20,000 ոսկի հարստութեան տեր եղողներ օրական հացի կարօտ հողի կամ ֆայրիկաններու խոնաւ գետիներու վրայ կը պառկին:

Երկուշաբթի ապրիլ 26-ին ժողովուրդը կը տանին կառավարական պաշտօնատունը իբր գերի: Հոգ օր մը արևուտակ սպասցնելէ վերջ ոչխարի հօտի մը պէս կը քշեն քաղաքի դուրս: ոմանք Թրիփանի եղբայրներուն գործարանը, ոմանք ալ գերմանացիներուն գործարանը կապատանեն, որովհետեւ քաղաքին մէջ մնալ անկարելի էր այլևս:

Հրդեհի զոհ դացին ժեզուիթներու եկեղեցին, սէօն երու դպրոցները, Ս. Ստեփանոս եկեղեցին, բողոքականաց ժողովարանը, հայ հոգովականներու եկեղեցին և ընդհանրապէս չձգեցին այրեցին: Հիմակ ալ կ'ընկնէր անսովորաբար կը յայտարարէին, թէ այս շարքին ու հրդեհին պատճառները հայերն են: հայերն են եղեր կրակ ձգողը, հայերն են եղեր թիւրքերը շարժողը և ընդհանրապէս:

Կառավարութիւնը գործունէութեան մէջ է—բոլոր հայերը բանա կը լեցնէ: զինուորական տետրեր պիտի դատէ եղեր հայերը: Մեր կացութիւնը շատ վտանգաւոր է և անօրհական ենք: 2—300-ի չափ հայ երիտասարդներ բանտը անօթի կը պառկին: Ասոր անոնց ամենն ալ զինուորական տետրին անջև հանելով թերեւ կ'ստանան զատապարտուողներ ալ ունենանք ու սահմանադրութիւնը պիտի քաշէ: Կառավարութիւնն ալ տեղացի թիւրքերուն հետ միաբանած հայերը կ'ամբաստանէ իբր ապստամբ ու ըստ այնմ կը շարժի Պետք է երեսփոխանական ժողովը խանութ յանձնախումբ մը դրէ: հոս, եթէ ոչ մեր վիճակը յառահատական է ոչ տեղական կառավարութեան վրայ կատարելիս ունենք, ոչ ալ հոս գտնուած սպաններուն ու զինուորներուն վրայ: Ամենքն ալ միտքերուն կ'ընեն: կ'աւելցնենք ամեն պէտքը ալ արդ հոս: Խուճաբանին անդ թուիւն է հեղուկութիւնով համեմատ:

Ատանա, 18 մայիս

Ինչպէս որ լսած էք հեռագիրներէ, Ատանայի ահաբեկ շարժը երեք անգամ կրկնուեցաւ: Առաջին շարժին, չարեք շաբթի օրը, ապրիլ 1-ին, խուճաբար բողոքացած բլլալով թիւրքը, չէրքէզ, քիւրդ, ալշար, արաբ և զնչու ցեղերէ, թուով 50 հազար, յարձակեցան քաղաքի վրայ: խուճաբանի մեծ մասը զինուած էր մարտիներով, որ նոյն օրը աւաւ օտեան յարձակելով կառավարական զինարանի վրայ հոս գտնուած բոլոր մարտի և մազէր: հրացանները կըցած էր դրուել: Կառավարութիւնը երեք միջամտութիւն մը չէ յուսեցնելով, ուղղակի կը յարձակին շուկայի վրայ, զինուորներու տուջնորդութեամբ, փողի նշանի մը վրայ: Հայերը յանկարծակիի դալով կըցան, միայն կեղծոտանալ բուն 3—4 հայկական թաղերու մէջ և քաջաբար դիմադրել: այդ թաղերէ դուրս գտնուած բոլոր հայ տունները փծացան, այրուեցան և մէջը մնացածներն ալ շարժեցան: Խուճաբար բոլոր խանութները կողոպտելէ վերջ կրակի յարձակիլ ինքնապաշտպան թաղերու վրայ, և այնպիսի կարծիք մը ունենալով թէ հայերը պիտի կրնան սպաննել փայտերով իսկ, շատ առաջ դացին և հոն այնպիսի կորուստներ տւին որ սարսափած ետ նահանջեցին, բազմաթիւ դիակներ թողլով փողոցներու մէջ: Գիշերը վրայ հասնելով կրակին հրդեհէն ամեն կողմէ այս անգամ հայերը նորէն կը դիմադրեն միշտ դէպի ներսերը քաշելով:

Առաւօտեան դէմ թիւրքերը նորէն կրակին յարձակումը, այս անգամ զինուորներ տեսնելով որ իրենց ցեղակիցները անգոր են, կրակին օգնել միանալով խուճաբանին, բայց նորէն ետ կը մղին բազմաթիւ կորուստներով, և անկարելի կ'ըլլար մտնել հայկական թաղերուն, և այսպէս շարունակ երեք օր և երեք դիշեր առանց դադարի կատարել կռիւներէ վերջ կառավարութիւնը հասկնալով թէ անկարելի է դրուել հայկական թաղերը, զինուորաբար կ'ընէ, հրաժիրելով հայերը հաշտել թիւրքերու հետ: Հայերը դիմադրելով կառավարութեան խաբեբայութիւնը մերժեցին: Ամբողջ կուրի միջոցին ներկայ էր անգլիական Մերսիի հիւպատոսը, որ չորեքշաբթի ապրիլ 1-ին լսելով Ատանայի շարժի լուրը հոս փութաց յատուկ կառավարով, և իր գլուխը ունենալով 20 ձիաւոր զինուորներ: միշտ կը պատէր փողոցները խուճաբար արդիւնելու համար և անհատեան բլլալով այս ամբողջ կռիւներուն, զարմանքով կը խօսէր հայ կուսուցներու քաջութեան վրայ, որ անհաւատուով էր: Արեւմտեան կառավարութիւնը անգլիական և ֆրանսիական հիւպատոսները ապահովեցնելով թէ անկէ վերջը եթէ շարժ մը պատահի ինքը անձամբ պատասխանատու է, երկու հիւպատոսները դալով հայերու քով:

կ'ապահովեն իրենց կողմ հայերը: իբրև հաշտութեան նշան կառավարութիւնը կը պահանջէ որ հայերը գէնքերը յանձնեն Երևաւ աստանուձմերէ և մերժումներէ յետոյ, վերջապէս հայերը իրենց գէնքերը կը յանձնեն, ի հարկէ, փոխհարկով հիւպատոսներու երաշխաւորութեան: Այսպէս անցաւ 10 օրը առանց դէպքի:

Եւրոպական զրահաւորները Մերսին հասան Ատանայի առաջին դէպքի լմնալէն երկու օր վերջ, այսինքն հայերը զէնքերը յանձնելէն երկու օր վերջ, երբ արդէն քաղաքը խաղաղած էր: Զրահաւորները հասնելէն 5 օր վերջը, Ռոտտաթոյէն և Վելիպուրէն 1300 հատ զինուորներ հասան երբև թէ հայերը պաշտպանելու համար: Ատանայի հասնելէն օր մը վերջը սկսաւ երկրորդ դէպքը: զինուորները կերակի ժամը 10-ին (ը. թ.), իրկուսան դէմ, յարձակելով հայկական վարժարանի վրայ, ուր բոլոր վերաւորակները պատուարած էին, նախ կրակի տէր և յետոյ պաշարելով փախչողները սկսան զարնել և ներքը մնացածները ամբողջն ալ ողջ ողջ այրեցին: մնացած հայ տուները թալանեցին, ջարդեցին և յետոյ այրեցին: Ժողովրդէն ողջ մնացածները Քրանսական փեղզիքներու և ամերիկեան միսիոնարներու դռները փախան ապաստանեցին: Այս դէպքը զրահաւորներու Մերսինի առջև դրած փառանակը պատահեցաւ, որ պզտիկ միջամտութիւն մը իսկ չն յուսուցին և յաւալորէն պիտի ըսել որ այդ ահուելի ջարդի կրկնումի անուղակի պատճառը երկու հիւպատոսներն եղան, որ հայերը համազելով գէնքերնին յանձնել տին:

Անոր վրայ վալին պաշտօնանկ ըլլալով նոր դադան մը եկաւ որ աւելի գէշ մէկն է, քան թէ նախկինը: Նոր եկող վալին տեսնելով որ բոլոր հայերու տուներն ու խանութները թալանուած, այրուած և իրենք ջարդուած ըլլալով մնացած են միայն երկու հաստատութիւններ— մէկը Քրանսական, միւրը ամերիկեան, ուր ողջ մնացած հայերը ապաստանած են: հրամայեց է զինուորներուն որ այս երկու հաստատութիւններն ալ կրակ տան և մէջը մնացածները ջարդեն: Այս հրամանի վրայ երրորդ ջարդը կրկին, անմիջապէս կրակ կուտան Քրանսական հաստատութեան և մէջը գանուորներէն փախել ուղղուեցին կրպաններ, իսկ ներս մնացածները կ'այրէին: ասիկա լմնեցելով կրկին ամերիկեան հաստատութեան, բայց այս միջոցին անգլիական հիւպատոսը օգնութեան հասնելով կրակը մարել կուտայ և կ'ազատեմ մէջը մնացածները:

Ահաւասիկ ամբողջ իրողութիւնը հակիրճ կերպով այն ստիկի ջարդին, որ տեղի ունեցաւ սահմանադրական կառավարութեան տակ և եւրոպացիներու աչքին առջև... Առանց չափազանցութեան կը փոխհարկեմ թէ Ատանայի հայու մը ոչ տուն և ոչ խանութ մնացած է: Քաղաքը աւերակ է: Ատանայի ջարդի միջոցին քաղաքէն դուրսը գանուող ամբողջ հայ գիւղերը և աղարակները փճացուցին և բնակիչները ջարդեցին: Ատանայի կուսակալութեան մէջ միմիայն Սիւ, Չէօր-Մէզրուան (Տէօրթէօյ) և Հաճին քաղաքները ազատեցան իրենց դիրքերու շնորհիւ և լաւ դիմադրութիւն ցուցնելով յարձակող խուժանին մեծ կորուստներ տին, մանաւանդ Դէօրթ Եօյը, ուր խուժանը զինուորներու հետ միացած յարձակելով ստիպուած եղաւ ետ նահանջել, ապա զինուորները սկսան ուժակոծել քաղաքը թնդանութեամբ, բայց հայերը ուժեղագ զինուորները զարնելով գրաւեցին թնդանութիւնը և մինչև հիմայ իրենց գէնքերը չը յանձնեցին կառավարութեան: Սիտի մէջ հայերը բերդը բաշտելով լաւ դիմադրութիւն ցուցուցած են, և իրենց կառավարին ալ լաւ մարդ մը ըլլալով հայերուն գէնք բաշտած է որ քաղաքը պաշտպանեն:

Ատանայի առաջին ջարդի միջոցին Տարսուր և սարձակման ենթարկեցաւ խուժանը միացած զինուորներուն հետ այրեցին հայերու ամբողջ տուները և թալանեցին: անձի կորուստը քիչ է: Մերսինի շեշակայ գիւղերը գանուող թիւրք խուժանը լսելով Ատանայի և Տարսուրի ջարդը յարձակեցաւ քաղաքի վրայ: հայերը կեղոնացած ըլլալով երկու հայկական թաղերու մէջ պաշտպանողական դիրքեր բռնեցին, բայց Մերսինի կառավարիչը քաջ մարդ մը ըլլալով զինուորներու

միջոցով վաճառեց բոլոր խուժանը և ներս չթողուց և ինքը անձամբ զինուորներու գլուխը անցնելով գիշեր և ցերեկ հսկեց քաղաքի վրայ: մինչև որ հասան զրահաւորները:

Վիլիկիոյ զոհերուն թիւն է— սպանուած, վերաւոր— 200,000: միայն Ատանայի մէջ 10,000 է: շատ դիակներ ծովը հասած: ըլլալով և եւրոպական զրահաւորներու ամբողջները ամեն օր ասոնց շուանկարները կ'առնեն, ասոնց անչնարու կառավարութիւնը ամեն օր 20—30 ծովն էլերըը նետուած դիակները փոստերու մէջ կը թաղէ: Ատանային գալով քաղաքին ժողովուրդը անկարելի է: դարձահաստութեան: ողջ մնացած հայերը քաղաքէն դուրս վրաններու տակ կը պատուարին, բայց սարսափելի հիւանդութիւն կայ իրենց մէջ, ամեն օր 20—25 կը մեռնին թշուառութեան: Անկարողելի վիճակ մը:

Կառավարութիւնը Ատանային և Տարսուրէն փախչողները ձերբակալելով ետ Ատանա կը դրկէ և ճամբան խուժանը կը յարձակի վրան և կրպաններ:

Սկսան խուզարկութիւններ ամենուրեք, գրաւելով հրացան, ատրճանակ, դանակ, գիրք, պատկեր, բայց նամակ և ինչ որ կը պատկանի յեղափոխութեան: Յեղափոխականները շատերը բանտ են: Թրքական պոստով եկող նամակ, թերթ, և ինչ որ ալ ըլլայ երբէք չեն յանձներ հասցէներուն: Կառավարութիւնը Ատանայի մէջ 100-ի չափ հայեր ձերբակալելով բանտարկած և բանտի մէջ սաքեր-ձեռքերը և վիզերը շիթալակապ կը շարչարեն: քսելով թէ իբրև իրենք եղած ըլլան պատճառը այս ամբողջ կոտորածին: Քանի մը հայեր անգլիական հիւպատոսարանը մտած են: կանավարութիւնը պատիկ կերպով կը պահանջէ իրեն յանձնել, բայց հիւպատոսը մերժած է: կառավարութիւնը անոնց գանուած տուներ հսկողութեան տակ առած է և վերջին անգամ դիմելով հիւպատոսին: քսած է թէ կամ յանձնէ կամ զինուորական ուժով պիտի մտնէ և ձերբակալէ չենք դիտել թէ ինչ պիտի ընեն:

Այս շաբաթ Պօլսէն հասան Հ. Յ. Գաշնակցութեան Պօլսոյ պատասխանատու Վարմնոյ կողմէ բժշկները դեղագործներ և մասնաւոր ատիկները վիրաւորեալները դարմանելու համար: Պօլսէն 6 հոգի զինուորական բարձրաստիճան պաշտօնեաներ եկան, զինուորական ատեան կազմեցին և ամբողջ Ատանայի կուսակալութեան համար պաշարման վիճակ հրատակեցին: Որևէ յարաբերութիւն անկարելի է: Ատանայի թիւրք խուժանը միանալով զինուորներուն բացարձակապէս մերժեց են զինուորական ատեանը և հակառակ պարագային պիտի ապաստմբին առարկելով թէ կառավարութիւնը իրենց հրաման տաւ հայերը ջարդելու: հիմա ի՞նչպէս կ'ըլլայ որ նոյն կառավարութիւնը կուզէ զիրենք պատժել: Պաշտօնապէս ճանուցել են հիւպատոսներուն թէ իրենք հրամանով ընդ այս ջարդը և հրաման տուող կառավարութիւնն է: ասոր համար իրենք յանցաւոր չ'ըլլալով պէտք չէ որ պատասխանատուութեան քաշին և պատժին: ասոր վրայ զինուորական ատեանը Պօլսէն 10,000 զինուոր պահանջած է:

Ա Ղ Է Տ Ի Շ Ո Ւ Ր Չ Ը

Ատանայի անցքերու և հայ յեղափոխականներուն ուղղուած պաշտօնական ամբաստանութիւններուն առթիւ մեր խմբագրութիւնը, ինչպէս յայտնի է, հետագրով բողբած էր օսմանեան տորհրդարանին:

Մյթ հետագրին ի պատասխան, քիչ յետոյ, ժընեվի օսմանեան ընդհ հիւպատոսը յանձնեց խմբագրութեանս ներքին գործոց նախարարի մի ընդարձակ հաղորդագրութիւնը (23 ապրիլ 1325 թ.) ուղղուած արտաքին գործոց նախարարութեանը և անոր միջոցով զրկեալ ժընեվ: Ահաւասիկ քաղաքօրէն և թարգմանօրէն (Քրանսերէնէ) անոր պարունակութիւնը:

Պատիւ ունիմ յանձնելու Չերդ գերագանցութեան պատճէնը այն հեռագրի, որ ժընեվի Դրօշակ կոմիտէն ուղղել

է «Եկնի Գագեթա» լրագրին*), Առանայի ցաւալի միջադէպի վերաբերմամբ, որի առիթով ժամանակին իմ պաշտօնատուները աւաճ է արդէն բացատրութիւններ երեոփոխանական ժողովին և որի մասին ելած՝ մեծաբանութիւնները արտատուած են պաշտօնական թերթին՝ մէջ:

Ապա զեկուցանողը կը հաւաստիացնէ թէ շարդերու սկզբէն ի վեր մինիստրութիւնը ամեն ճշտութեամբ կատարած է իր պարտականութիւնը, մինչդեռ յայտնի մարդիկ, մտքերը գրգռելու նպատակով, հրապարակ կը նետէին սէնսաւիճոն լուրերը, իբր թէ կառավարութիւնը հեռագրած է եղեր վիլայէթներուն՝ ձեռք չտալ եւրօպացիներուն և կոտորել միմիայն հայերը:

Այդ սուտ լուրը հրատարակեց և այդ հեռագրի պատճէնը, որ հերքումն իսկ արժանի չէ, կարգաւեցեալ երեսփոխանական ժողովին մէջ: Մինիստրի Առանայի հետ փոխանակած հեռագիրները, որոնք նոյնպէս կարգաւեցեան պարզամեծի նիւտին մէջ այնքան յստակ են, որ երկու տեսակ մեխաբանութեան չեն կարող ենթարկուիլ:

Եթէ խոսվութիւնները անկարելի եղաւ ճշել անմիջապէս, պատճառն այն է որ՝ ինչպէս հաստատուած է անժիտնելի փաստերով՝ ճամբած զօրքը չէր կարողացեր ժամանակին տեղ հասնիլ մեծ տարածուիլեան շնորհիւ:

Այնուհետև մինիստրը կը խօսի կարօտեալներուն օգնելու համար իր արձակած հրահանգներու մասին, զրկեւ՝ գրամի քննիչ յանձնաժողովի ու յանցաւորներու պատժման մասին, կը յայտարարէ թէ այդ պատժումը պիտի կատարուի առանց ցեղի ու կրօնի խարուութեան (sic!) և ամենայն արագութեամբ ու խստութեամբ: Վաւերացնէ ի վերջոյ, թէ բացարձակապէս անհիմն է եւրօպական թերթերու տարածած այն լուրը, որի համեմատ իբր թէ օսմանեան կառավարութիւնը անաչառութեամբ չէ կատարեր իր պարտքը և իբր թէ ան կը նետէ մեղքը հայերուն վրայ:

Թիւրք կառավարութեան այդ զեկուցագրին մեր խմբագրութիւնը պատասխանեց ներքին գործոց նախարարին ռզղուած հետևեալ գրութեամբ.**) :

Պարոն Մինիստր,

Ապրիլ 26-ի ձեր թէղքերէով զոր արտաքին գործերի պատասխարը կուղղէ մեզի ժընեվի ընդհանուր հիւպատոսի միջոցով դուք կը բարեհաճիք հանգստացնել մեզ այն սուղ մուշի առիթով, զոր արտայայտած էինք Առանայի սղբալի անձքերու մասին զրկած մեր հեռագրին մէջ:

Բողբի այդ հեռագիրը մենք ուղղած էինք երեսփոխանական ժողովին, ի ղէմս նախագահի, Իսկ պատճէնը կ. Պօլսի քանի մը թերթերուն:

Մենք կը բողբէինք այն ապշեցուցիչ ամբաստանութիւններուն դէմ, որոնցով Առանայի իշխանութիւնները հայ յեղափոխականները կը ներկայացնէին իբր շարդերու գրգիչ ու նախադրածակ: Այդ մեղադրանքը կարգաւեցեալ կառավարութեան ներկայացուցչին բերով պարզամեծի ամբիւնէն նա միևնոյն ժամանակ շրջան բրաւ եւրօպական մամուլին մէջ: Մենք այժմ կը կարգանք անոր տրտալի պատճառաբանութիւնը պատշաճաբար թաղիլով Վէլայի՝ № 203-ի մէջ: Անոր համեմատ հազարաւոր հայ ֆէդայիներն են որ ուժերով ու մաւղէրներով ապառաղինւած, արտաքին էին տարածել մահաբանական ազդաբնակութեան վրայ:

*) Անմասկանակի է, քէ ինչնու միեմասը կը յիշէ փայն յեճի Գագեթան՝ մեր մեծագիտը, ուղղուած էր պարլամենտին, յանձին Գեոլազանի, պատճէնը դիւրած էր մեծ վիզիւրին, ինչպէս ցանկ մի կանի հայ էր քիւր լրագիրներուն:

**) Բաւազի կը քարգանձեմ Թրանսիլեմբ:

Այդ տեսակ հրեշուտութիւններ կը զեկուցանէին պարլամենտին կը լուին հաւանութեան շեշտերով և ի ցոյց կը դրէին պաշտօնական թերթին՝ մէջ, որ պիտի տարածէ այդ արտաքին մեղադրականը մահաբանական աշխարհին մէջ բողբերով անտեղութիւնն ու զայրոյթը յաւանական զոհին դէմ:

Մենք պարտք սեպեցինք բողբել օսմանեան պարլամենտին ու բաղաբախիթ աշխարհին առջև մի անտրակելի զբաւերութեան դէմ:

Չեղ անյայտ չեն, պ մինիստր, բարեխմական այն կապերը, որ մենք ունեցած ենք երեսփոխար թիւրքին՝ հետ Զուլխեան Զեղափոխութեան առաջ և անի յետոյ: Չեղ յայտնի են և այն լաւ գրայումները, որոնցով տուրած են մեր կոմիտէներն ու ժողովուրդը մահաբանական ազդաբնակութեան վերաբերմամբ:

Մեր ծրագիրը, մեր բաղաբախական բաղձանքներն ևս անձանօթ չեն երեսփոխար թիւրքերու մեծամասնութեանը, որոնց հետ աշխատած ենք ընդհանուր հայրենիքի ազատագրութեան և բարօրութեան համար: Այդ իղձերը հայ բովանդակ ազդաբնակութեան իղձերն են: Ոճիր է, սրբմն, ընդդէմ մարդկութեան, հռչակել հայ յեղափոխականները իբրև խոսվարար, իբրև ազգային ապելութիւն ու թշնամութիւն սերմանողներ: Այդ տեսակ ոճիր մը գրծեցին Առանայի իշխանութիւնները զարմանալի անձարձակութեամբ, երբ արդէն աներեր ու արիւններ էին ընդարձակ տարածութիւններ, խոսժանի ու հակաիշխանական զննորութեան ստոր բնազդներու շղթայագործ բռնկումով:

Մհաւել ողբերգութիւնը կատարած է նա եկաւ միանալու ողբերգութեանց այն շարանին, որոնք խաղացել էին համիդեան նզովեալ թաղաւարութեան օրով:

Վերջնական կառավարութիւնը կատարեց արդէօք իր բովանդակ պարտականութիւնը այդ խմբովն սրած ու թիւններու առեն, որ տեւեցին 15 օր անընդհատ ամբողջ վերլույթին մէջ: Սա մի հարց է, որու վրայ աւելի լաւ է չճանալանայ:

Այսօր մենք ամբողջ հայ ազդաբնակութեան հետ սպասողական մի անձկալի վիճակի մէջ ենք: Մենք կրօնապետք արդար ու տնայառ դատ ու ճշունձ: Մարդկայնութիւնն ու քաղաքակրթութիւնն այդպէս կը կամենան: Սահմանադրութեան պատիւն այդպէս կը հրամայէ:

Ի՞նչ par impossible, սահմանադրական կառավարութիւնը մեղանչէ այդ հրամայական պարտականութեան դէմ, նա կը ձգէ ատելութեան անանցանելի վիճ մը հայ և մուսուլման ժողովուրդներու միջև. դա կը լինի, արդարեւ, ամենադառն յուսախաբութեան գագաթնակետը:

Չափազանց ցաւալի է արձանագրել որ վերջին 10 ամաւայ ընթացքին մէջ նոր թեժիմը սինչ չըրաւ այդ տարաբախ ժողովուրդի համար, սինչ չձեռնարկեց բարեքելու վարչութիւնը, աւտօչացնելու բիւրօկրատական միջոցառումը ուր կը վստան համիդեան յետադէմ ու հայատնաց պաշտօնեաները: Չուզեցին նոյնիսկ փոխադրել վալիները, չհամարձակեցաւ նոյնիսկ դաշել յայտնի շարդարարներուն, որոնց ներկայութիւնը յարառեւ սպառնալիք մը է հայ ազդաբնակութիւններու համար: Անտարբերութիւնը կայսրութեան ամենէն տառապող տարրի հանդէպ բնորոշ դժերեն մէկն էր նոր թեժիմին: Ապատեութիւնը բաշխերեց յանցաւորներուն, մղելով զանանք դէպի նոր սերագործութիւններ:

Առանայի ողբերգութիւնը ատոր հետևանքն է: Նա կրօնապետայ ընդհանրանալ և նորէն հայ ժողովուրդը մատնած է վտանգալի կացութեան մը ամենավատթար քմահաճոյքներուն:

Պարոն Մինիստր,

Մեզ համար չափազանց տխրալի է տոնանման փաստեր արձանագրել: յեղափոխական Թիւրքիայ ամենափայլուն յաղթութեան օրերուն: Բայց այն մեծ պատասխանատուութիւնը, զոր մենք ստանձնած ենք հանդէպ մեր ժողովուրդի, որի դատը պաշտպանած ենք 20 տարիէ ի վեր անհաւասար ու արիւնալի մեռամարտի մէջ: Արդիւ-չամիդեան բռնակալու-

Թեան դէմ—այդ պատասխանատուութիւնը կը ստիպէ մեզ, ի պատասխան ձեր հանգստացուցիչ յայտարարութիւններուն, ըսել ձեզ, այս քանի մը ճշմարտութիւնները, զոր մենք միանգամայն անհրաժեշտ կը սեպենք: Այսօր հայ ազգաբնակչութեան գերագոյն բաղձանքն է՝ որ իր կառավարութիւնը խօսքէն անցնի, վերջապէս, դէպի գործ: Մենք կը պատենք, վստահելով ձեր, ինչպէս և ամբողջ կառավարութեան ու պարլամենտի, իմաստութեանը: Անոնցմէ կախած է վճռել՝ արդեօք Թիւրքիոյ այլազան տարրերը պիտի սպրի՞ն այսուհետև սերտ համբաշխութեան մէջ, թէ՞ պիտի յօշուտեն զերար, ի վնաս կայսրութեան կենսական շահերուն և յօշուտ թշնամիներուն, որոնք զայն կը հետամտեն:

Ընդունեցէք և այլն:

ԽՄԲԱԳՐ. „ԴՐՕՇԱԿ“
ՕՐԳԱՆ 2, 3. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
* * *

Պարիզի օսմանեան դեպքանատուները, հրահանգած, անշուշտ, կեդրոնական կառավարութեանէն, հարկ տեսաւ իր կողմէն հերքում մը տալ վերոյիշեալ զրպարտութեանց առթիւ: Ա. Պօլսին ուղղած մեր հեռագրին *) հրատարակեց Temps լրագրի մէջ ընդարձակ ու բաւականաչափ կըրտոս ծանուցում մը, որով կը յայտարարէր թէ հայ կոմիտէները կուզեն իբր թէ կեղծ լուրերով վարկաբեկել սահմանադրական կառավարութիւնը, թէ ջարդերու մէջ յանցաւորը միմիայն միւսիւրմանները չեն, թէ «պատասխանատուութիւնները կը բաժնուին» և ինչ Temp-ը, ինչպէս և պարիզեան մի շարք ուրիշ թերթերը, հրատարակեցին քանի մը օր յետոյ դեպքանատան այդ ծանուցման դէմ մեր խմբագրութեան այս հեռագիրը:

Ար ցաւինք որ հարկադրւած ենք բողոքել Պարիզի օսմ. դեպքանատան կողմէ մայիս 24-ին Temps-ին հաղորդւած ծանուցագրին դէմ: Արձագանք տալով հայկական շարքերու կազմակերպողներու նախապէս տարածած լուրերուն՝ դեպքանք կը յայտարարէր որ Ատանայի շարքերուն պատասխանատուութիւնը կը բաժնուի միւսիւրմաններուն ու հայերուն միջև և կուզէ հաւատացնել որ իբր մեր կոմիտէն կը ջանայ վարկաբեկել օսմանեան սահմանադրական կառավարութիւնը:

Խիստ չլուսած բան է, որ այնքան վիպութիւններէ յետոյ, նոյնիսկ նոր թէթիմի ներկայացուցիչներու կողմէ, որ միաբերան կը հաստատեն թէ կոտորածները ապրիլ 13-ի պետական հարձակէն առաջ սարքած էին Համիդի պաշտօնեաներէն, արդի կառավարութիւնը տակաւին կը ջանայ պատասխանատուութիւնները կիսել և հայեր տեսնել սոյն ահուելի կոտորածներու թելադրիչներուն մէջ: Խիստ միջոցներ ձեռք կ'առնեն հայերուն դէմ և կուզեն անպատճառ գանձոք արհեստով շարագործներուն նոյնացնել կաշխատին զինաթափ ընել հայ ժողովուրդը 2օք-Մարզաւանի մէջ և ամեն տեղ ուր որ ենքնապաշտպանելու վեճակի մէջ է:

Այս իրողութիւնները հայ շրջանակներու մէջ ցաւալիօրէն դարձանք և ապշութիւն կը պատճառեն: Մենք չենք կրնար անտարբեր մնալ երբ կը տեսնենք որ այնքան սարսափելի նախճիւրներէ, ամբողջ նահանգներ աւերակերակ ընելէ և խուճանին ու անբան պաշտօնեաներու հրամանին տակ եղող զինուորներու կողմէն անպատմելի խժժութիւններէ յետոյ, դարձեալ զոհերն են որ յանցաւոր կը դատուին և խտուրթեան կ'ենթարկուին: Մեր արդի պատասխանատուութիւնը պարտք կը դնէ մեր վրայ որ այս իրողութիւնը մտանանչենք Էւրոպայի հանրային կարծիքին: Արդարադատ ու անաչառ օրինադրպունն է որ պիտի կրնայ խաղաղացնել երկիրը, ուժ տալ անոր և արգիլել նորանոր եղեւնագործութիւնները:

*) Այդ հեռագրի պարունակութիւնը հարողորմ է իմի կեղծակալական մամուլին:

ՌՈՒՍԱՍՏԱՆ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՑԱԳՆԱԳԸ

Թիֆլիս, 15 մայիս

Ծանր հարւածները, որոնք ամեն օր տեղում են հայութեան գլխին կովկասեան զանազան բաղաբներում, այլ ևս կասկածի տեղիք չեն տալիս, որ ոռւս միապետութիւնը նորէն մի արտակարգ խաղ է սկսել մեր դժբախտ երկրում:

Երկու ամիս առաջ մի քանի ոռւս լրագիրները հրատարակեցին կովկասեան փոխարքայի ներկայացուցիչ Բարոն Ն. Օ. Դ. Է. Ի կարծիքը կովկասի և մասնաւորապէս հայերի ու Ղաշնակցութեան մասին՝ այն, որ հակառակ մինչև իսկ Պետական Դումայի հոկտեմբերեան աջակողմեան բանաձևին կովկասում ըէֆօրմներ մտցնելու ժամանակը չէ հասել բնաւ այն, որ այդ երկիրը դեռ հանգիստ չէ վերջնականապէս և հանգստութեան նշաններ տակաւին ցոյց չէ տալիս այն, որ այդ երկրում գործում է Ղաշնակցութեան պէս մի միջազգային (international) կուսակցութիւն, մի վիթխարի յեղափոխական մարմին, որի գլուխը բարձրանում է ամենուրեք—Թիւրքիա, Պարսկաստան—ուր կառավարութիւնները թուլանում են, և սկսում է կործանել տիրող կարգերը, վերջապէս այն, որ մինչև ուրեմն չը վերանայ Ղաշնակցութիւնը, մինչև չ'ոչնչանայ իր սաղմի մէջ կովկասում անհնար է որևէ գործ սկսել ըէֆօրմների և վերաշինութեան:

Այսպէս էր խօսում Ն. Օ. Դ. Է. Ի, կովկասեան «ազատամիտ» փոխարքայի «ազատամիտ» ներկայացուցիչը. նա, որի վրայ հիացած են կովկասեան ազգերի պաշտօնական և վատասեւուած պատգամաւորները. նա, որ դեռ ևս նոյնժեբերին Պետական Դումայում բոլորովին այլ ոգով և այլ տոնով էր խօսում նոյն ինչերի մասին, երբ հարկաւոր էր պաշտպանել ծայր-աջակողմեան յարձակումներից իր անգոյն և թուլամորթ մեծաւորին:

Եւ ահա այսօր կարծես կ'ամենում են իրականացնել այդ չարագուշակ և սմարդի-սպառնալիքը: Համատարած և մասսայական ձերբակալութիւններ ամենուրեք, բանտարկութիւններ կովկասեան երկրի բոլոր անկիւններում և բոլոր խաւերի մէջ—ուսուցիչներ, վիպասաններ, բանաստեղծներ, հրապարակագիրներ, բժիշկներ, իրաւաբաններ, բահանաներ, արհեստաւորներ, գիւղացիներ, բանւորներ և մինչև իսկ վաճառականներ ու կապիտալիստներ: Այսպէս է արտայայտւում ոռուսական անիմաստ ու կարճատես բաղաբակաւորութիւնը կովկասում և մասնաւորապէս հայկական շրջաններում: Հայ գրականութիւնը մամուլը, դպրոցները, անտեսական արդիւնաբերական կեանքը—բոլորը զարնած, քայքայւած, աւերւած են: Բացի սրանից—ինչպէս մի քանի տեղ կարդացինք—գոււեր են կազմակերպւում նաև հայ կաթողիկոսական հաստատութեան և հայ եկեղեցական իրաւասութեան դէմ մեր ժողովրդի այդ երկու դժբախտ և հինաւորը ներկայացուցչական մարմինները աւելի ևս թուլացնելու, կազմալուծելու նպատակով: Ստոր փորձանքներ են պատրաստւում նաև ժողովրդական

բազմաչափաբար գպրոցների գլխին, որոնք ուսուսական բըն- նապետութեան համար միշտ եղել են անտանելի ու վնասակար հիմնարկութիւններ և որոնք քանիցս ան- աղնիւ խաղալիքի առարկայ են դարձել: Այս դժբախտ նորութիւնների հետ միասին շուրհեր են պատում նաև որ կովկասեան վարչական համակարգը (système administratif) մի խոշոր փոփոխութիւն պիտի կրի, որ փոխարքայութիւնը պիտի վերանայ, որ կովկասը պիտի բաժանւի երկու մասի՝ հիւսիսային (մեծամասնութիւնը ռուսներ) և հարաւային (հայեր, վրացիներ, թուրքեր) — առաջինը խաղաղ, հնազանդ, տիրասէր, երկրորդը ապրս- տամբ, ըմբոստ և յեղափոխական: Մէկը իբր հարազատ որդի, պիտի կառավարւի պետական ընդհանուր օրէնք- ներով, միւսը իբր խորթ զաւակ, պիտի ապրի յղիւսու- րական նահանգապետութեան՝ կազմով: Այս բոլորը նրա համար, որպէսզի տեղական ազգաբնակչութիւնը մշտական անուս սարսափի մէջ լինի, որպէսզի ուսու- կան բիրտ ոստիկանութիւնը միակ տէրը դառնայ քա- ղաքական դրութեան, որպէսզի ամեն բան կախած լինի վայրագ ու արիւննուշտ ժանդարմներից:

Յաւերթօրէն տխմար և մշտնջենական իմաստակ բիւրօկրատիան այս բարբարոս միջոցներով կա- մենդում է ուժեղ հարած հասցնել կովկասեան ժո- ղովուրդների ազատ ու անկախ զարգացմանը, կամե- նում է արմատախիչ անել կովկասեան բարձունքներից ըմբոստութեան, պայքարի, ընդվզումի գեղեցիկ առաքի- նութիւնը:

Այդ յանցաւոր քաղաքականութիւնը առ այժմ գլխաւորապէս ուղղւած է հայ ժողովրդի դէմ՝ յանձին նրա ամենաառողջ, ամենաթարմ և կենսունակ մասի՝ մի տարր, որ իր յանհանգիստ բնաւորութեամբ, իր մաքուր ու խանդավառ հայրենասիրութեամբ և իր գործօն մարդասիրութեամբ շարունակական մտա- հոգութեան մէջ է պահում ուսու միապետութեան շահերը: Կովկասը և մանաւանդ հայ ժողովուրդը մի կատարել մղձաւանջ է դարձել նեարդոտ ու ջղայնա- ցած միապետականների համար: Նրանից է բղխում այդ վերին աստիճանի վատառողջ ու ցաւագար քաղաքա- կանութիւնը:

Այս ծանր օրերին, հակաշարժումի (reaction) այս կատարի ու կործանարար ընթացքի հանդէպ՝ կովկա- սեան մտաւորականութիւնից և առանձնապէս հայ մար- անջող ու խորհող երիտասարդութիւնից պահանջուում է վերջին ծայր ուշագիւր վերաբերմունք դէպի մեր երկրի կեանքի ու մահեան այդ մեծ խնդիրը: ազատ և ուրոյն անպրումի այդ ողբերգական պրօբլեմը... Չգաստանալով և հակելով հանդերձ մեր երկրի անձեռնմխելի իրա- ըունքների վրայ՝ հայ մտաւորականութիւնը պիտի աշ- խատի լաւ ըմբռնել երևոյթի ամբողջ էութիւնը: Արդ- ինչ է վերջնականապէս կամենում մեզինց ուսու կա- ռավարութիւնը յետոյ ուսու կեանքի ընդհանրապէս և կովկասեան երկրի պայմանները մասնաւորապէս այնպէս են արդեօք որ նա կարողանայ յաջողութիւն ունենալ իր մտադրածի և ծրագրածի մէջ:

Միապետութեան ծրագիրն ու նպատակը պարզ է քիչ առաջ ընդգծեցինք, որ նա դաւ է նիւթում կով- կասեան երկրի ապահովութեան և ազատ զարգացման դէմ: դաւ է նիւթում գլխաւորապէս հայ ժողովրդի

ամենաներական, ամենաարգար տենչանքների դէմ — ապրել իբր մարդ, ապրել իբր հայ, զարգանալ ազատութեան և արդարու- թեան մէջ:

Պիտի կարողանայ արդեօք կեանքի մէջ գործադրել իր ծրագիրը:

Ահա խնդիրը:

* *

Կուել կովկասի դէմ նշանակում է կուել յեղափո- խութեան դէմ, աւելին նշանակում է կուել ռամկա- վարական և պարլամենտական սկզբունքների դէմ, աւե- լին նշանակում է կուել ամենատարրական սահմանա- դրութեան դէմ, այսինքն ինքն իր դէմ: Արանցից վատ նշանակում է կուել մի ինքնասէր, ինքնագիտակից ու դի- մացկուն ազգաբնակչութեան դէմ: Իսկ մի վերին աստիճանի անմիտ ու խելառ պայքար է ուղղւած դէպի մի երկիր, որ պատմութեան ընթացքում ցոյց է տւել դիմա- դրութեան, ահագին կարողութիւն, որ տարելու, ապատօրէն և ինքնուրոյնաբար ապրելու ջերմ բաղձանքն ու պահանջներն ունի: Ինչ են ցոյց տալիս մինչև այժմ եղած բոլոր դառն փորձերը, պատմական փաստերի այնքան տխրահուշակ շարքը... Պաս- կելից սկսած մինչև վատահամբաւ Գօլցին ան- դուր և անդադար աշխատեցին այդ ձանապարհով: Ինչ շահեցին: Կովկասեան ազգերի միահամուռ աստիճա- թիւնն ու զայրոյթը: Ինչ արդիւնաւորեցին տեղական ուժերի դիմադրական կարողութիւնը: Հայ ամ- բողջ ազգաբնակչութիւնը մի հատիկ մարդ դարձաւ և ծառացաւ խելակորոյս կառավարչապետի ու ուսուսկան զօրքերի առջև: Թիւրքերին նետեցին հայերի վրայ, փոխադարձ թշնամանքի և հակառակութեան սերմեր ցանցեցին կովկասեան ժողովուրդների միջև: Ինչ եղաւ հեռանքը: Թուլացրին արդեօք ժողովրդի կորովը, արգելեցին արդեօք թիւրքերի ինքնագիտակցութեան զարթնումը:

Եւ մի՞թէ այսօր պայմաններն աւելի ձեռնտու են միապետութեան համար: Ամենեին Ռուսաստանը ետպնական կուելց առաջ աւելի լաւ չէր քան յետոյ, նա աւելի լաւ չէր նաև 1904—1906 եղբայրասպան արիւնահեղ թուականներին, նա աւելի լաւ չէ և այժմ միշտ միևնոյնն է: Ներքնապէս փտած ու ալլասեռւած: Եւ, դժբախտաբար, այդ փտութիւնն ու ալլասեռւածը հետզհետէ ոչ թէ բուժուում է, ոչ թէ վերանում, այլ աւելի ևս զարգանում ու առաջադիմում: Գրամական վիճակը ծայրայեղօրէն զարնւած, մշտնջենական պարտքի մէջ, հինգ տարի տեղ համատարած զինուորական դրու- թեամբ: Երկրի ամբողջ կարողութիւնը սպառած, ազմի- նիստրասիօնը անպէտքացած ու անբարոյացած, բովան- դակ պաշտօնէութիւնը վատասեռւած... Այս է ներկայա- ցնում լախաճաւալ Ռուսաստանի ընդհանուր կացու- թիւնը ամենուրեք՝ սկսած Նեվաի ափերից մինչև Խա- պոնական ծովը:

Բուն երկրում դժգոհութիւնը, զայրոյթը ահագին է հասարակութեան համարեա բոլոր խաւերը մի անդի- մադրելի ատելութեամբ լցած՝ պահպանում են վտան- գաւոր, յարագուշակ, արհաւիրալի խաղաղութիւն, որ աւելի սարսափելի է գուցէ, քան այժմուկն ու շարժումը:

Գիւղացիութիւնը, բանւորութիւնը, արհեստաւորները, մանր բուրժուազիան, համալսարանները, ուսանողութիւնը, ամբողջ իսկական մտաւորականութիւնը, մինչև իսկ մեծ բուրժուազիան, — բոլորը բողոքող և ըմբոստ: Մնացել են իսկական ուսւ մարդկանց վնասակները, աւազակներ, ոճրագործներ ու անգրագէտներ, որոնք նեարդատ, հիւանդագին ցնցումներ են անում՝ պահպանելու համար բունպետութեան խարխուլ ու աւերակ գահը: Այսպէս է այնտեղ՝ Ռուսաստանի ներքին նահանգներում, այսպէս է նաև «խաղաղացած» ու «հանգստացած» Ծայրերում:

Կովկասի պայմաններն էլ միւս կողմից միտմարական չեն ուսնական միապետութեան համար: Արացիները վաղուց գիտակցութեան մէջ են և չափազանց վատ տրամադրւած դէպի ապիկար կառավարութիւնը: Թող այս վերջինը չխաբւի բնաւ. հակառակ մի բանի գաղափարաւիճառ «հրապարակախօսների», հակառակ ֆէօդալական այն սակաւաթիւ ու ողորմելի մնացորդների, որոնք ամեն կերպ խուսկ են ծխում կենտրոնական իշխանութեան վրաց ժողովուրդը իր ահագին զանգւածով դէմ է բունպետական անորակելի սխտէմին: Եւ այս դիմադրութիւնն ու հակառակութիւնը օրէցօր աւելի է ընդգծւում: Գուրխի արիւնոտ պատմութիւնը, իր լաւագոյն զաւակների անարդար և անիրաւ արքայները, իր ներկայացուցիչների՝ Պետական Գուճախի անդամների անտեղի բանտարկութիւնը, յուզիչ ու ողբերգական մահը և այլ շատ ուրիշ եղելութիւններ հաշտութեան ոչ մի հնարանորութիւն չեն թողել: Այսօր էլ ուսնական ներկայացուցչական բարձրագոյն ժողովում նստած Արաստանի պատգամաւորներ՝ արժանաւոր յաջորդներ իրենց դժբախտացած և տաղանդաւոր հայրենակիցների՝ ամենից կրակոտ և ամենից ուժգին թափով են բննադատում քայքայւած և ախտաւոր ուսնական ընթացիկը:

Գայով թուրքերին վերջին հինգամսակը նրանց համար քաղաքական դաստիարակութեան և առողջ ինքնագիտակցութեան տարիներ էին: Սկզբում կոյր գործիք նենգաւոր ու դաւադիր կառավարութեան ձեռքին՝ նրանք յետագայում սկսեցին հասկանալ իրենց հիմնական սխալը: Կովկասի զանազան վայրերում և Ռուսաստանի հեռււոր սահմաններում առաջ տարւող յեղափոխական շարժումը մի կողմից իրենց քայքայած, աւերակւած, հաւասարակշռութիւնը կորցրած անտեսական կեանքի սգաւոր պատկերները իբր հետեանք: Հայթիքական անմիտ խելագար ընդհարումների, միւս կողմից եկան համոզելու մեր մահմեդական հարեաններին, որ կովկասեան ազգերի եղբայրական համերաշխութեան մէջ է գտնուում միայն նաև թուրքերի անհատական ազգային երջանկութիւնն ու պահպանութիւնը: Նրանց պատգամաւորների համար ուսնական առաջին երկու Գուճաները իսկական դարձներ հանդիսացան: Այստեղ նրանք արտայայտեցին շատ աւելի պատաւոր կերպով և շատ աւելի մարդկայնօրէն՝ քան թէ առաջ արտայայտել էին կովկասեան զանազան քաղաքներում: Կանգնելով միշտ ընդդիմադիր տարրերի շարքերում՝ նրանք չը վարանեցին նաև ստորագրել Մուրոմցեվի հետ միասին Վիբորգի պատմական կոչը՝ նետաւած ընդդէմ ուսնական միապետութեան: Այսպէս

կամացուկ, բայց հաստատուն քայլերով մեր հարեանները առաջ էին գնում քաղաքական հասունութեան ճանապարհով, երբ Պարսկաստանում և Թուրքիայում, նրանց ցեղակից և կրօնակից այդ երկու արեւելեան խոշոր երկիրներում, ծայր տեղ և յաղթանակեց ժողովրդապետական ու քաղաքական սկզբունքը, երբ երկու տեղում էլ խորտակեց միապետական բացարձակ իշխանութիւնը՝ յանուն առաջադիմութեան, յանուն ժողովուրդների հաւասարութեան և ազատութեան: Պատմական այս վերջին փաստերը ազդելով հանդերձ կովկասեան կեանքի վրայ առհասարակ շատ բան փոփոխեցին նաև մեր հարեանների հոգեբանութեան ու աշխարհահայեացքի մէջ մասնաւորաբար: Եւ դեռ անցած աշնանը, կովկասեան հարցի ազդակալի վիճաբանութեան ժամանակ, Պետական Գուճայում թուրք պատգամաւոր Հա յ դ ա Ր օ վ ը արտասանեց մի նշանաւոր ճառ, որի մէջ ի միջի այլոց ասում էր՝ մտաւորապէս հետեւալը «սրանից մի քանի տարի առաջ Կովկասում կատարւած շարժումներին՝ մենք մասնակից չեղանք. մենք նոյնիսկ գործիք հանդիսացանք ուսնական կառավարութեան ձեռքին և նետեցինք մեր հարեանների վրայ: Այսօր բարեբախտաբար անցել են այդ ժամանակները: մենք պիտի բաւենք մեր մեղքերը և իմացէք պարոններ — դիմելով աջակողմեաններին — որ մենք այսուհետեւ բարեկամներն ենք բոլոր յեղափոխականների և միշտ պիտի բաւենք ապագայի յեղափոխութեան առանձին շարքերում... Կովկասեան թուրք պատգամաւորի այս խօսքերը ինչ որ էլ չ'ապացուցանեն, ապացուցանում են այնուամենայնիւ այն դժգոյն փոփոխութիւնը, որ կատարել է մահմեդական զանգւածի մէջ յանուն ժողովուրդների ազատութեան և ընդդէմ բունպետութեան տիրապետութեան...»

Արացիներից և թուրքերից ցած չէ կանգնած յամենայն դէպս Կովկասի հայ ժողովուրդը իր քաղաքական ըմբռնումով ու հասարակական ինքնագիտակցութեամբ: Տարիներ շարունակ ամենավատթար պայմանների մէջ հարկադրւած լինելով իր գոյութիւնը շարունակել նա աղողել է ձեռք բերել հասունութեան, կամքի ու գործելակերպի մի պատկառելի կարողութիւն: Կարողացել է իր միջից արտադրել վեր հանել խելահաս, կամքոտ ու կորովի հասարակական գործիչների մի թիւ, որ գիտ է, հասկանում է մեր ժողովրդի հոգեբանութիւնը և նրան շրջապատող պայմանները, որ օժտւած է անդիմադրելի կամեցողութեամբ և որ ընդունակ է հաւաքական արդարութեան համար գոհաբերել իր անհատականը: Յեղափոխականների այդ խաւը այնքան էլ մակաւաթիւ ու ցանցաւ չէ, որպէսզի հնարաւոր լինի թէկուզ ամենախիստ միջոցներով ոչնչացնել այն: Հայրենիքի ամենահեռւոր, ամենախուլ խորշերում է երեւացել ստեղծագործել, սնուել այդ բացառիկ ուժը և որպէսզի նա ոչնչանայ: Այնպէս է որ ինքը հայ ժողովուրդը ոչնչանայ: Կովկասեան կառավարութիւնը այս բոլորը պէտք է լաւ հասկանայ: Սկսած Երեւանի նւաճման թւականից մինչև այսօր, աւելի քան 80 տարի, նա յարատւ չիման մէջ է այդ ժողովրդի հետ նա յաւերժօրէն դաւադրութիւններ է սարքում այդ փոքրիկ քաղաքակիրթ համայնքի գոյութեան դէմ: Եւ մի թէ այնքան երկար տարիների ըն-

Թացքում, այնքան եղելու թիւնները, այնքան տխուր փորձերից յետոյ չկարողացաւ համոզել, որ հայ Ժողովուրդը բնաւ չի կամենայ իր ամենաբուռն, ամենահրամայական ցանկութիւնները թաղել անյայտութեան խաւարում: Զէ՛ որ պատմութիւնը բարեբախտաբար չէ մեռնում բռնակալների հետ միասին, չէ՛ որ նա կանգուն է միշտ և կարող է ուսուցանել յաւիտեան...

Այսպէս, կովկասեան ազգերի և նրանց մէջ հայերի քաղաքական փորձառութիւնը, հոգեկան կորովը, արատութեան ձգտումը ոչ թէ չէ՛ նւազել, այլ կրկնապատկել է ու աւելի հարկադրական դարձել: Բոլոր գործունեայ դասակարգերը, նրանք, որոնք տնօրինում են և ղեկավարում հասարակական շարժումները՝ մի գերագոյն զայրոյթ են տածում դէպի ուսնական քաղաքականութիւնը: Գիւղացիութիւնը կրկնակի բռններ շալկած՝ շատ լուս գիտէ, որ իր թշուառութեան մի ահագին մասը բխում է միապետական կառավարութիւնից, բանտութիւնը, որ այսօր հազիւ է կարողանում տեղաւորել, որեւէ գործարանում, աւելի քան գիտակցում է, ճանաչում իր ներկայ հակառակորդին: Ռուսական պետութեան այդ բարբարոս, ասիական ձևը տեղ չէ թողել մեր գեղեցիկ հայրենիքում, որ չը հարուածէ, չը վիրաւորէ...

Պետական գուժաւոր կոչւած ծաղրանկարը, մեծ հողատերերի, աւատների այդ միջնադարեան հաւաքումը կամ պէտք է ժողովրդապետական հաստատութիւն դառնայ, կամ թէ պէտք է ոչնչանար: Քսաներորդ դարում եւրոպական պետութեան յաւակնութիւններն ունեցող մի երկիր չի կարող կառավարել ֆէոդալական հիւսուուրց վարչաձևով: Ռուսաստանի մտաւոր, պատմական, աշխարհագրական, տնտեսական, արդիւնաբերական հասարակական պայմանները չեն կարող այդքան գռեհիկ հակասութեան մէջ լինել նրա քաղաքական կազմի հետ: Այն Ժամանակ, երբ արևելեան երկրները, մինչև իսկ պառաւ Զինաստանը կամենում են դուրս գալ թագաւորի «աստածային իրաւունքի» հեքիաթական սահմաններից՝ Նեվայի ափերում անհնարին է դառնում միապետութեան բացարձակ իշխանութիւնը: Պատմութիւնը այդքան ցայտուն անախրօսիզմ (Ժամանակավրէպ) չի կարող հանդուրժել:

Պ Ա Ր Ս Կ Ա Ս Տ Ա Ն

ՍՍ. ՆՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՎԵՐԱՀԱՍՏԱՏԻԱԾ

Հաջը յուսախաբ իր ազդարարութիւններուն մէջ՝ վերագարծուց սոհմանագրութիւնը իր ժողովրդին՝ որուն դէմ երկու տարի է ի վեր անազնիւ ու անիմաստ պայքարը կը մղէր: Երկու բռնակալներ, որոնց գոյութեան արմատները ոճիրի և նենգամտութեան մէջ թաղւած էին, Ազգիւ Համիդ և Մէհմէդ Ալի Հաս, միաժամանակ կը գլորին ազատութեան կուռքներուն տակ, և Ասիան, միադէմ ու տրժգոյն, դարբերու կուռքերը կը տապալէ և կսկսի նոր շունչ ծծել: Մեծ Պանը կը մեռնի...

Մտ տարի ու կէս է, երբ պարսից Հաջը երդմնագրով՝ ամբողջեց Պահարիստանի պալատը (1908 յունւար 3) և գլխատեց Սահմանադրութիւնը անողրք և աւազակաբարոյ վրէժխնդրութիւնով մը: Այդ րոպէին սրգէն երկիրը մասնաւոր էր անխիղճ կամայականութիւններու ու անիշխանութեան,

և անշէջ ստեղծութիւններու, միանգամայն սկսած էր ազատութեան ու դաժան բռնակալութեան մշտանորոգ մարտնչումը: Մագդեականութեան խաւարի ու լոյսի կռիւն էր:

Սոյն չարաղէտ ոճիրը ժողովրդական ազատագրութեան դէմ, մղձաւանջ մը եղաւ նաև Հասին, որ ետպաշտ դարհուրանքէ մը լլուկ փակեցաւ իր ամբողջ-պայտաին մէջ և ինչպէս Աբգիւ Համիդ, ահ ու սարսափի քաղաքականութիւնը գործադրեց: Սա միահեծանութիւն էր որ իր վերջին և յուսահատ ճիգը կը թափէր փրկելու համար իր դահին պատուանդանը:

Հասին ընդդիմութիւնը կառավարական սկզբունքէ մը չէր բխել, այլ աւանդութիւնէ մը, որ կառաջնորդի անձարձակ կամայականութիւններէ և մարդկային գոյութեան վրայ անասնային և նախամարդկային մտածումէ... Մէհմէդ Ալի Հաս չէր այն լուսամտի բռնակալը՝ որ զգալով իր երկրին յետադէմ վիճակը, կը ջանայ երկաթէ ձեռքով ու ժողովրդասէր ոգով ուղղութիւն տալ անոր և ընտանեցնել քաղաքակրթութեան պայմաններուն: Այդպիսի մտածում մը հետի էր նոր Հասին, որուն իղէալը եղած է յիմանալ ու շուստանայ ան երբէք չհանդուրժեց որ Մէհմէդ սահման մը դնէ ազգային հարստութեան իր վայրագամտումներուն և իր ապերասան քմահաճոյքներուն:

Հասին այդ կիսաբարբարոս հոգեբանութեան մէջ, Ռուսիա նպատակաւոր հոյ և վիճակ դուռ իր քաղաքական նպատակին համար, և զարկ աւաւ անոր կոյր և վատ հակումներուն, միւս կողմէ խրախուսեց բոլոր այն շրիքը, որ մեծաշող լազապներ կը կրեն՝ սալթանէներ, դօյլէներ, մուքեր և լէն, որ դարերով իրենց ժողովրդին արիւնը ծծած ու հողի հաւասար ըրած են:

Բարեբախտաբար Հաջը ու Պահատուր ձէնկերը, չկրցան իրենց մուրատին հասնիլ և Խրանը ուր գիտակցութեան կայծերը սկսած էին ճարձատիլ, ընդզգեցաւ գնահատելի արժանապատուութիւնով մը, որ պատիւ կը բերէ իրեն:

Թեպիղզը ազգաբերդը եղաւ այդ բմբոստ ոգիին, այն օրէն ի վեր երբ Հաջը պայպենական դաւաճան աւանդութիւնով մը, հետամուտ եղաւ սնչայնել Պարսկաստանի ազատական դէմքերը: Թեպիղզի հերոսական դիմագրութիւնը Պարսկաստանի պատմութեան ամենաշքեւ էր: Ինչէն է բուռ մը քաջիկ հպարտ ազատութեան սիրով, անպարտելիօրէն ետ մղեցին Հասին լէշերներն ու վարձկան օղիներն զսճակը: Եթէ Վարպատականի մայրաքաղաքը չկրցաւ վճռական հարւածը տալ բռնապետութեան բռնակին, բայց կրցաւ, երկարատև ու անընկճելի դիմագրութիւնով հիացում աղբել ու բարձր պահել պարսիկ ժողովրդի մէջ Ազատութեան իղէալի մը հաւատը և լաւագոյն օրերու յոյսը: Այդ յամաւ և անձուէր ոգորումն էր որ արձագանք դուռ երկրին ամեն կողմը և յեղափոխական գունդեր հանեց անոր մոխիրներէն:

Հայերը, որոնց գոյութեան հետ կապ ունի ունէ քաղաքական ու հասարակական յեղաշրջում այդ վայրերուն մէջ, չէին կրնար, բնականաբար, անտարբեր մնալ այդպիսի պայքարի մը որ մտքի և սրտի կը խօսի միանգամայն: Անոնք, ինչպէս ամեն ազատական ու մարդասէր շարժումներու, նետուեցան արիւնտ դաշար, ուր իրենց կապաւոր մարտիրոսութեան պատիւը, և իրենց մտքի ու բազուկի վճռականութեան բաժինը բերին, նոյնքան արիասիրտ, ողբան անհասակնդիր ոգով, Թեպիղզի յեղափոխական շարժման: Անոնք աղը եղան իղէալական խոյանքներուն ու համեստ մարտիկները մարտնչող տառապաւքին ու ստրկութեան Պարսիկ յեղափոխականները իրենք աւաջներ կը հանդիսանան խոստովանելու հայերու դէրը Իրանի ազատագրական պատմութեան մէջ: Թեպիղզի բարձունքներուն վրայ և այլուր հայ կործանները անվեհեր քաջութեան հրաշքներ գործեցին ու նահատակեցան փառքով, անոնց վրայ Աիւլխտանի՝ անվառամ վարդերը պէտք է սփռել: Պատկից ծովէն մինչև Ռուսիա, հայ յեղափոխականներու շուքն է որ կրնկերանայ պարսիկ խոմբերուն: Ազատութեան կրօնը կեղբայրայնէր այդ երկու հակախօս տարրերը, որ դարերով իրար ատել սորված էին տգէտ ստրկութեան մէջ:

Մայիս 4-ին Եփրեմը 60 կործաներով կը գրուէ Ղազ-
վինը և գերի կը բռնէ կառավարիչը և 1000 զինուոր Ղազ-
վինի առումով Թէհրանը և Շահը յեղափոխական հար-
ւածին տակ կ'իյնային արդէն:

Ամեն կողմէ Շահին մահացու հարւածներ կը տեղան,
բայց Մէհմէդ Ալի Շահ, չէր ուզեր զինանիլ, Ռուսիան իր
ետեւն էր ու կը սրտապնդէր զինքը:

Շահի անմիտ ամբարտաւանութիւնը, որ չէր ուզեր խո-
նարհիլ Ժողովրդական առիւծի առջև, պատրաստ էր երկրի
քաղաքական գոյութիւնը վտանգել թէկուզ Ռուսիան դար
գրուէր, Սա գուեհիկ վրէժխնդրութիւնն էր վեհապետի մը
կողմէ զոր պատմութիւնը չկրնար արդարացնել, երկու մի-
սիւլման և Ժամանակակից վեհապետներ, մէկը Ասփորի
ափին, միւսը Տէմավէնի ստորտը, նոյն անարժան զգա-
ցումը ունեցած են, ցոյց տալով որ իրենց և իրենց ժողո-
վուրդներուն մէջ ոչ մէկ համակրական կապ չկար:

Մէհմէդ Ալի Շահ, իր անել և յամառ վիճակէն դուրս
գալու համար, քանիցս փորձեց պարսիկ ժողովրդի մտե-
ւանդութիւնը գրգռել յայտարարելով որ «սահմանագրու-
թիւնը լինամի է Շէրիաթին», այսպէս քաղաքական հարցը
կրծականի փոխել կուզէր. այդ քայլը արձագանք չգտաւ:

Քանի մը անգամ խոստացաւ Սահմանագրութիւնը վերա-
հաստատել, բայց իր ուզած ձևով ջանաց յետադիմական-
ներէ կայսերական խորհուրդ՝ մը կազմել Մէհմէդ փոխա-
րինելու համար, այս բոլոր խաբէբայութիւններ էին և ժո-
ղովրդին կողմէ ոչ մէկ ընդունելութիւն չգտան, այնպէս որ
Շահը իր անվերջ ստատուութիւններուն ու խուսափողական
միջոցներուն պատճառով, նենգամիտ տիրոջը ստացաւ
Ժողովրդին ազատական ուժը՝ Գանուշը Էնասի՝ կը պահան-
ջէր և ոչ կեղծ ու կիսատ միջոցներ:

Երբ այսպէս անարդ կերպով Մէհմէդ Ալի Շահ պարսիկ
Ժողովրդի ճակատագրին հետ կը կապուի, Յեղափոխութիւնը
կսկիւր թափ առնել ու հզորանալ: Ի զուր դեպքանները
կը յորդորէին զայն որ «Մէհմէդ» գումարէ, Շահը կը մոտ-
բերէր խեղդել յեղափոխութիւնը իր ափ մը վարձկաններով
և այդ բողբոխ ու յամառութեան տեսարանը զուեշայային
կերպարանք մը առած էր: Տնտեսական տագնապը, որուն
մէջ կը ապրուէր Իրանի վեհապետը և չէր կրնար ոչ մէկ
փոխառութիւն կնքել, թոյլ չէր տար իրեն աւելել ուժ հա-
նելու յեղափոխական շարժման դէմ: Իր զորքերը այն-
թախանով ու կողպուտով կապրէին. սա կուխ չէր, այլ բար-
բարոս հորդաներու տեսարաններ:

Ի վերջոյ յաջողեցաւ Թէպրիզը սովի ենթարկել՝ հազար-
գակցութեան միակ ճամբան, ջուղայի գիծը կարելով
ուրիշ քաղաքը պաշար կը մտնէր: Քաղաքին տնտեսական
վիճակը տագնապալից դարձաւ, օտարահպատակներու դուր-
թիւնը մասնաւորապէս մեծ արմուկ հանեց, սուլակաւ մա-
մուլը ուժ կուտար՝ ամեն ինչ չափազանցելով ու խեղա-
թիւրելով և ցոյց տալով ժողովուրդ վտանգ մը օտարա-
հպատակներուն. սա նախերգանքն էր սուլակաւ միջամտու-
թեան ճամբաները հորդելու համար:

Շահը հիւպատոսներու դիմումին վրայ վեց օր վնասագար
չնորհեց՝ որ պաշար մտնէ քաղաք, բայց Էյն Տօվլէ չկա-
տարեց անշուշտ Շահի գաղտնի հրամանին վրայ:

Թէպրիզի յեղափոխականները կը զգային որ միջամտութեան
հոտ սկսած էր բուրել հիւպատոսարաններէն: Մեծ ժողովի
մը մէջ շատեր՝ անձուէր զահարութիւնով մը. իրենց ունե-
ցածին մինչև կետը կը տրամադրէին սովամահ գրութիւնը
փրկելու և պալքաքը շարունակելու համար: Գիմում եղաւ
հիւպատոսներուն, որ եթէ կուզեն իրենց հպատակները
հեռացնեն, քանի որ վտանգ կը նշմարէին. — Մեր կառա-
վարութիւնները գիտեն, կը պատասխանէին միաբերան երկու
հիւպատոսները: Ընձուէր Շահին կը հեռագրէ և կը
պարզէ իրերու վիճակը և օտար միջամտութիւնը: Հրաման
կուգայ բանալ ճամբաները, բայց ուշ էր. սուլակաւ զորքը
Ռուսիկոնը — Արաքը — անցած էր արդէն և մտած Պարս-
կաստանի հողը (ապրիլ 26—27): Ռուսիան այդ բոլորէն
կակնկալէր, և ինչ ալ ըլլար պիտի չուզէր փակցնել առիթը:
Ի զուր Էնձուէնը կը բողբոխ յայտնելով որ ճամբաները

բացած են և թէ քաղաքը վտանգէ զերծ ըլլալով աւե-
լորդ է զօրքերու մուտքը: Ոչ որ մտիկ կ'ընէր:

Յայտնի է որ Շահի տխմար դիմադրութիւնն էր որ այդ
փորձան ը հրաւիրեց երկրին վրայ: Ռուս դիւանագիտու-
թիւնը իրերուն այնպիսի ընթացք մը և սուս մամուլին
այնպիսի ստայող և հակառակեայ լուրեր տարածել տաւ որ
միջամտութիւնը անխուսափելի ըրաւ, մինչդեռ հուլաւոր
իրադրութիւնները կուգան հաստատել որ սուլակաւ միջա-
մտութիւնը շատ վաղահաս էր և անտեղի:

Ապրիլ 22-ին անգլո-ուսն նոր կարգադրութիւնով մը, որ
կը բղբէր, իբր թէ, 1907-ի պայմանագրութեան, միջա-
մտութեան պատահականութիւնը ընդունւած էր օտարա-
կաններու ապահովութեան համար եթէ Շահը յա-
մառէր Մէհմէդը չզուժարել: Անգլիական տեսակետով սուս
բանակը Թէպրիզ պիտի մտնէր, երբ բացարձակ պէտք զգայ-
ւէր, և թէ զոր. Սնարքի խոյս պիտի տար պարսիկ ժողովրդի
դիւրապահութիւնը արթնցնելէ զօրքերու անօգուտ ցոցա-
գրութիւնով մը:

Իսկ Ռուսիա իր քաղաքական յանդուգն քայլը արդա-
րացնելու համար, կանխօրք կ'իմացնէր տերութիւններուն որ
միջամտութիւնը անհրաժեշտ է՝ և թէ «այսպէս վտանգութիւնը
վերահաստատելէ յետոյ սուս բանակը կ'ապրի կանչի»:

Անգլիոյ արտ. գործոց նախարարը բրիտանական ժողովրդին
կտակածը փարստելու համար կ'ըսէր, «սուլակաւ առաջ-
խաղացութիւնը Թէպրիզի վրայ, օտարահպատակներու ինչքը
և կեանքը պահպանելու համար է, այս պայմանով միայն
Անգլիա կ'աջակցէր Ռուսիայ»:

Սակայն Անգլիա լուստեղեակ ըլլալու էր որ օտարական-
ներուն վտանգ չկար պարսիկ ժողովրդին կողմէ, ընդհակա-
ռակը Daily Chronicle-ի թղթակցին Մուրի և ամերի-
կեան միսիոնարական դպրոցի անօրէնին պը. Պաքըրֆիլդ
յեղափոխական շարքերուն զուլից անցնելը, ուր Պաքըրֆիլդ
կուրծքէն հերոսի մահովը մեռաւ ապրիլ 20-ին, հաւաստիք
մըն էին թէ որքան փոխադարձ համակրութիւն կար երկու
տարրերուն միջև: Էդ. Արէյ քաղաքական կեծիք մը կը
չատագովէր. նկատի ունենալով միջադպրոցի մուսլի կացու-
թիւնը և անգլո-գերման յարաբերութեանց սուր բնոյթը:
Անգլիոյ արտ. գործոց նախարարը գել մը կուտար իր ախա-
կան հմայքին Ռուսիան սիրաշահելու համար: Իսկ Ռուսիան
չնականօրէն կը ձգտէր շահագործել Անգլիոյ այդ վարսնոտ
տրամադրութիւնը՝ «արպատականի մէջ Վանչուրիի պար-
տութեան փոխվրէժը» պատրաստելով:

Անգլիական մամուլը որքան որ «անխուսափելի» կը նկատէ
այդ միջամտութիւնը, կը վստահայ սակայն որ մի գուցէ
Ռուսիան Ատրպատականը նոր Եդիպատս մ'ընէ զայն ընդ-
միշտ գրուելով:

Ահաւաստի, ըստ սուս լրագիրներուն, անգլո-ուսն համա-
ձայնութեան պայմանները Շահին հետ:

- 1) Շահը անփոփոխ կը պահէ Սահմանագրութիւնը և
ընդհ. ներում կը շնորհէ:
 - 2) Պարսկաստանի ֆինանսական բոլոր գործերը կը գտնին
Անգլիոյ և Ռուսիոյ հսկողութեան ու կ'օժտուին տակ:
 - 3) Սատրապաճ և միւրտորը նշանակելէ սուաջ կը հաս-
տատուին Անգլիոյ և Ռուսիոյ կողմէն և ապա կը նշանակին
Շահի կողմէ:
 - 4) Նոր իրաւունքներ չեն տրուիր ոչ սքի, նոյնիսկ ժողո-
վրդին՝ առանց երկու պետութեանց գիտութեան:
 - 5) Առանց Ռուսիոյ ու Անգլիոյ թոյլտուութեան Պարս-
կաստանը չկրնար նոր փոխառութիւն ընել սեւ պետութեան:
- Ատոր փոխարէն Ռուսիա և Անգլիա պարտաւորութիւն
կտանան 1) Շահին կեանքը, ինչքը, թաղը ապահովել:
2) Խոշոր փոխառութիւն ընել Պարսկաստանին, 3) Շահը
պաշտպանել ժողովրդին կողմէն սեւ բռնութեան դէմ:
Ռուս զօրքը ապրիլ 29-ին կը հասնէր Թէպրիզի առջև,
իսկ 30-ին փորքիկ խուճ մը կը մտնէր քաղաք... հիւպա-
տարանները և օտարները պաշտպանելու համար, որոնց ոչ
մէկ վտանգ չէր սպասուար:
Ռուսներու միջամտութիւնը այն բոլորէն, երբ Սպահան,
Ղազվինը, Ռաշադ սկսէր էին սպանուալ և Թէպրիզը ուժ

կղզար դիմադրելու, հակառակ սովին, վհատում առաջ բերու յեղափոխական շարքերուն մէջ:

Ռուսներու մուտքը, ինչպէս կը գրէ մեր թղթակիցը, անսկիւղ չէր, յաճախ կը խօսէր այդ մասին ժողովրդին մէջ: Բայց յեղափոխականները կապակէին միայն երբ միակեանքով յաղթէին որպէսզի անոնք ներս մտնէին իբր փրկարարներ և ազատէին ժողովուրդը վայրենի հորդանքերու վայրագութիւններէն: Երբ այդ յոյսը ուշացաւ, ռուսները մէջտեղ նետեցին «վտանգը» որ իբր թէ կախաւոր էր ռուսներու գլխուն, յանաւանդ երբ ռուս հիւպատոսարանի վրայ սկսան դիմել շինել, ամենքը սկսան լուրջ մտաւանջութեան մէջ կիսալ այս անտեղի պատրաստութիւններէն: Էնծուկներն բոլոր հաւատարմները ապարդիւն անցան, պատրուակ բռնելով Շահի խուսափողական ընթացքը, անհրաժեշտ գտան ռուսական դրքը մայրել: և պատժել Շահի կամակորութիւնը:

Այժմ որոշ յայտնի կըլլայ որ ռուսներու ներս մտնելը որոշուած է երբ, ինչիւրը միայն ձևի և պարզութեան մէջ կը կայանար:

Ռուսները քաղաքը մտնելէն ի վեր տէր ու տիրական են դարձել և կը կարգադրեն ու կընեն ամեն ինչ և կը հեռագրեն իրենց ուղած ձևով:

Միևնոյն օրը Շահը, թերևս այն համոզումով որ ռուս բանակը եկած է իր բացարձակ իշխանութիւնը վերահաստատելու համար, իր հօրեղբայրը, Նայիպ էս Սալմանէն, ամենայնտաղիմական մէկը, նախարարացեալ կարգեց: Չոյգ դեպքանները բողոքեցին՝ այդ անուանումին դէմ:

Մէհմէդ Ալի Շահ յուսակաբ և կայէնի իր արարքէն անթափար, որ մեղսակից եղած էր ռուսական միջամտութեան իր անձնական արիւնարբու նկատումներուն զոհելով հայրենիքը, ակամայ տեղի աւաւ և կողմնց նախարարութիւն մը:

Իսկ մայիս 6-ին մասնաւոր հրովարտակով կը վերահաստատէր սահմանադրութիւնը, կը յայտարարէր ընտրական նոր օրէնքի մը պատրաստութիւնը և Մէհմէդի դուստրու մը յուլիսի վերջերը:

Թէհրանի մէջ կազմուած է 21 հոգիէ յանձնախումբ մը, որ պաշտօն ունի ընտրական նոր օրէնքը շուտով մշակելու և կիրառելու, իսկ Սահմանադրութիւնը պիտի պահէ իր նախկին նկարագիրը:

Իսկ նախարարաց խորհուրդը կոչ մը ուղղելով երկրին, կը հրաւիրէ ժողովուրդը հանդարտութեան, կարգիլէ զէնք կրելը և կը կազմէ զնւարական ատենաներ պատժելու համար խռովարարները:

Պարսիկ ժողովուրդը, առանց դաւաճանելու իր զգացումին և պէտնամ մտնելը կրելու, չէր կրնար չբողոքել օտար միջամտութեան դէմ: Խօրատանի Էնծուկները ռուսական Տու մայի նախագահին հեռագրով բողոքեց ռուս արշաւանքին դէմ իբր հակառակ «անմիջամտութեան սկզբունքին»: Գժգոհութիւնը ընդ հանուր է բայց պարսիկ ժողովուրդը դժբախտաբար, հայրենասիրական մեծ ժէստ մը ընելու միջոցի մէջ չէ, իր բողոքը պատռնական և միջադճային կրաւունքներու տեսական սահմանը չանցնիր, որուն միայն իրաւարարը ազգային ուժն է:

Թէպրիզի յեղափոխականներուն համար մասնաւորապէս ծանր էր և անմարտելի Ռուսիայի ընթացքը: Գառն է և վշտով տեսնել օտարը այն ներսական հողին վրայ, ուր այնքան հերոսական ջանքեր ու արիւն թափուած էին: Գժգոհար է և անհանդուրժելի մէկ բռնակալի լուծէն ազատելով յարիւզի լուծէն շատ ինչալ: Այնպէս որ անոնց զայրոյթը և վրդովմունքը ռուս բանակին և արգարացի էր Շահին ու իր գրութեան խորհրդակցաններուն դէմ որ երկիրը մատնեցին, ռուսի իրենց բուռն ու ցաւոտ բողոքը հեռագրեցին Շահին, օտար միջամտութեան դէմ: Շահը ի պատասխան, կը ջանայ չքանդել ինքզինք և մեղքը ձգել: Էյն Տօլլէի վրայ որ չէր կատարած իր հրամանը:

Պարսիկ յեղափոխականներուն մէջ հայրենասիրական զգացումը հայրենիքի վտանգին առջև, սրտառուչ արտայայտութիւններ ունեցաւ երբ ռուսական միջամտութիւնը ակներև

կը թէր շատեր առաջարկեցին «անձնատուր ըլլալ Շահին»: քան թոյլ տալ որ ռուսները գան դրաւն պարսից հողը: Այսպիսի գեղեցիկ զգացումներով օժտուած սարը մը, ունենալու էր այս րոպէին արժանաւոր կառավարութիւն մը: Մէհմէդ Ալի Շահ, ցաւ է ընել, ստոր կիբքերով վրէժխնդրութեան հակամտերով միայն պատասխանած էր ժողովրդի աչիւ իղձերուն ու ձգտումներուն:

Թէպրիզը այժմ խաղաղ է, ճամբաները բացուած: Բայց որքան անշուք է ու դժգոյն այդ խաղաղութիւնը, երբ Ազատութեան հերոսները իրենց յաղթութեան դաշտերուն վրայ օտար վրաններ կը տեսնեն: Երբ Իրանի ստիակները պիտի չըբայլային վարդազոյն Ազատութիւնը: Ռուսական հրամանատարը դացեր ծալլեր է Արարատական մայրաքաղաքին մէջ սկսած է զինաթափ ընել ժողովուրդը և քանդել ռազմադիրքերը:

Մնարքի կը ձգտի զգացնել Թէպրիզի ժողովրդին ռուսական կապիտալ ազդեցութիւնը և թաքուն նպատակը: Ռուս պաշտօնեայի մը վերաւորելուն առթիւ, անարգարօրէն 10,000 թուման սուղանք խեց ժողովրդէն: «Բէջ» հաւանական կը նկատէ որ ռուս զօրքերը պարսիկ կանանց ձեռք դպցուցած ըլլան ուրիշ գրգռուած վերաւորած ըլլան ռուս զօրական մը: Մասնաւոր է օտար աղբիւրներ կը հաստատեն որ ռուս կողակները շատ անփափկանկատ կը վարէին կանանց հետեւելով ու անոնց լաշակները բանալով և նոյնիսկ տունները մտնելով: Պարսիկներու ընտանեկան ու կրօնական զգայումը խիստ վերաւորած է ռուս զօրքերու ընթացքէն: Մնարքի նկատելով երևի այն վատ տպաւորութիւնը որ կարող է առաջ բերել իր... քաղաքակրթիչ բանակին վարժանքը, հրամայեց է զօրքերուն պատշաճութիւնով վարել ժողովրդին հետ ժողովուրդը հանդարտ է և ամեն կերպով խոյս կուտայ ռուս քաղաքական ինտրիկներուն պատրուակի առիթ տալէ, բայց ինչու չխորհիլ թէ Բէլաուարի հերոսը, կարող է վարը այնպիսի միջադէպեր ստեղծել որ Ռուսիան անպայման կերպով յետաձգէ իր զօրքերուն ետխառնումը: Մնարքի ոչ միայն զնւարական, այլ և այդ քաղաքական պաշտօն ունի: Թէպրիզի մեր թղթակիցը հետեւեալ շահեկան տեղեկութիւնները կը հաղորդէ մեզի:

«Մայիս 12-ին զօր. Մնարքի դադանի «բերքագով» (հրամանագիր) կը հրամայէ իր սպաներին խեղ ուր որ զէնք տեսնեն կամ գտնեն: Երբ դիմադրութիւն ըլլայ ունէ տունէ մը, կը ընէ չըբապատել այդ տունը, ծերերը, կիները ու երականները, դուրս հանել, միացածները ձեռքակալել և տունը թնդանօթով հիմնայատակ ընել: Ըստ պիտի պաշտպանել հայկական թաղը ու դրամատունը»:

Մնարքի ոչինչէն կուզէ բան ստեղծել: Սոյն նպատակաւոր կոչը իր մէջ կը դրիէ արդէն զօրքուով նեղամիտ սերմը: Երբ պարսիկները ունէ առիթ չեն մտածող տալ և ոչ ալ հայերուն դէմ մասնաւոր ատեղութիւն կը սնուցանեն, քանի որ իրենց աչքովը տեսան անոնց հիանալի անձնիրութիւնը, Ռուսիա, իր քաղաքական նպատակի իրագործման համար, հողը կը պատրաստէ և թերևս հայերը դարձեալ քաղաքական նախադր ըլլան բաւազօրոսիկ խրտումներու: Ռուսական րուբլիները կարող են քանի մը խելագարներ մէջտեղ հանել և դրութիւնը կընուտել: Հայ ժողովուրդը, մենք յոյս ունինք, որ չիյնար այս անգամ ռուս քաղաքականութեան թակարդը և դաւաճանել պարսիկ ժողովրդին, որուն ազատութեան պայքարին մատաղ ըրաւ կարիճներու լեզէն մը և որուն հետ կարող է ըսվքով սպրիլ և յաւաղիմել եղբայրական համերաշխութիւնով մը:

Ոմանք կը կարծեն թէ ռուսական այդ արշաւանքը ցոյց մըն է Թիւրքիոյ դէմ՝ որ իբր թէ յաւակնութիւններ ունէր Արարատականը դրաւելու: Ինչ ալ ըլլայ Ռուսիոյ այդ քայլը կարող է անդրադառնալ միջազգային կացութեան վրայ և թերևս Գերմանիա պիտի աշխատի դժտութեան խնձոր մը ընել Անգլիոյ և Ռուսիոյ միջև:

Շահը, նոր նախարարութիւնը կազմելէ յետոյ, ուր կերևան ակնաւոր և ազատական դէմքեր, Շահպաղի պալատէն քաշուած է Սալմանապուտ Այժմ ան կը մտածէ իր կաշին վրիկել, ինչպէս սուլթան Համիդ, որուն հնարամտութիւն

ները կը կապէր և որուն չարաչար անկումը մեծապէս ազդեց իր վրայ և զգաց միանգամայն ժողովրդական ուժին անպարտելութիւնը:

Պարսիկ յեղափոխականներուն մէկ ժառը անպայման Շահին դահլիճէն ինչը կը պահանջէ և չուզեր ոչ մէկ հաւատ ընծայել անոր խոստումներուն, իբր խաբէբայ և գաւաճան. կը պահանջէ նաև արտաքսուածը և նոյնիսկ պատժուածը անոր անխիղճ և յետադիմական խորհրդականներուն և արձակուած անկանոն զօրքերուն:

Նոյնիսկ Թէպրիզի առումէն յետոյ՝ յեղափոխականը գունդերը հարաւէն և հիւսէսէն կը պատրաստէին զոռոճ տալ Թէհրանի վրայ բռնակալութիւնը իր որջին մէջ խեղդելու համար, ուստի ան պաշտպանութիւնը միայն կեցուց այդ թափը:

Շահը երթալով առարկայ կը դառնայ ժողովրդական ատելութեան. բէկիսի մը երկիւղը ժողովրդը միշտ լարած կը պահէ, մանաւանդ որ Մէհմէտ Ալի չգաղբիբ դաւադրելէ և իր ջանկութիւնն է որ ուսաները Թէհրան ալ մտնեն և փրկեն իր կացութիւնը:

Ռուս զօրքերը Թէպրիզի նոր կառավարիչ կարգելուն պէս պէտք էր հեռանային, ոյժ մ'անպայման կերպով յետաձգեր են: Պարսիկ ժողովուրդը շատ զրգուած է ուսաներու կուպիտ արարքներուն դէմ և ամեն կողմէ բողբոքներ կը տեղան, այն աստիճան որ Թէպրիզի վաճառականները որոշած են պոլիտ հրատարակել Ռուսիոյ սպարաւորներուն դէմ և դիմել եւրոպական գործարաններուն, նոյնիսկ ուսս ազատական մամուլը չլինելով համբերել ուսս բանակի անպատշաճ և տմարդի վարմունքին դէմ դէպի պարսիկները կը պահանջէ որ Սնարսկի ետ կանչուի իբր տնարժան զօրավար մը որ պատիւ չբերեր Ռուսիոյ:

Պարսիկ սահմանադրականները յատուկ ներկայացուցիչ զրկած են եւրոպական պետութեանց մօտ Թէպրիզի ուստական գրաւման դէմ բողբոքելու համար: Գերմանական մամուլը շեղմ կերպով կը պաշտպանէ պարսից տեսակետը: Թիւրքիան թէև ներքին ծանրակշիւ հոգերով զբաղած, չլինար սակայն լուս և անտարբեր մնալ ուստական այդ քայլին հանդէպ: Արդէն լուր կայ որ Թիւրքերը կ'առաջանան մինչև Մարաղա, հակակշռելու համար ուստաց նպատակը: Պարսիկները ոչինչ կարող են ընել բացի պլատոնական ու հայրենասիրական բողբոքներէն բանի որ ոչ մէկ զինուորական ուժ չեն ներկայացներ և իրենց Շահերուն ու հաքիմներուն միակ նպատակն եղած է մինչև որս որքան հնար է, թշուառացնել ժողովուրդը, ծծել զայն և ձգել երկիրը անպաշտպան ու տարրական դրութեան մէջ:

Ռուսական միջամտութիւնը և վրդովեցնող ընթացքը անպայման պարսիկ ժողովրդին ատելութիւնը շարժեց: Ռուսները փոխանակ սիրաշահ քաղաքականութեան մը հետեւելու, ընդհակառակը որքան կրնային պարսիկ ժողովրդի մէջ առաջ բերին հակաուստական տրամադրութիւն որ հեռու է ուստաներուն մէջ տեսնելէ բարեկամական ոգի: Սնարսկի այնքան առաջ գնաց որ հարածեց Սատար և Պաղիբ խաներու պէս ժողովրդական հերոսները և ստեղծեց չնչին պատրաստներ տուգանքի դատապարտելու դանոնք. նոյնիսկ Սատար խանի տունը ուզեր է գրաւել, եթէ անոր վրայ անմիջապէս օսմանան դրօշակը չպարզէր: Ռուս զօրավարին բռնական և զզուելի ընթացքը դուրս կելլէ օտարականները պաշտպանելու պարզ միջամտութեանէն. ան կը վարուի իբր տանտեր ժողովրդական երկու հերոսները, որոնք այնքան արիւթիւնով իրենց հայրենիքի ազատութեան դատը պաշտպանեցին, արդար զայրոյթով լեցած բողբոքած են Ռուսիոյ ոսնձուութիւններուն դէմ: Անոնք յարգանք միայն կրնային ներշնչել ուստ թշնամիի եթէ անոր մէջ անպետական ոգի կայ: Այժմ անոնք, ուստաց հալածանքէն ապաստանած են տաճկաց դեպքանատունը և կը վայելեն օսմանեան դրօշակին հովանաւորութիւնը: Թէպրիզի ժողովուրդը նմանապէս դժգոհ ուստներէն որոշած է օսմանեան հովանաւորութեան տակ մտնել և ի հարկին անոր միջամտութիւնը հրաւիրել իրնդիւր արդէն կը լրջանայ:

Ռուսաստանը թէ ներքին և թէ արտաքին քաղաքական

նութեան մէջ իր բեւեռատողը կորսնցուցած է և ո՞վ կրնայ հակապնդել որ խելայեղ ցարիզը նոր Մանչուրի մը չպատրաստեր Արարատի սարահարթին վրայ, ուր կը կարծէ թէ դեռ բաւական կան հայեր որոնց վրայ իր արիւնուշտ խաչապաշտի հովանաւորութիւնը տարածելով կրնայ կոտորել տալ զանոնք և... միջամտել:

Ն Ի Ի Ր Ա Տ Ի Ո Ւ Ի Թ Ի Ի Ն

Պալեանեան Կեդր. Կօմիտէն ստացած է՝

ՌՈՒՍՉՈՒԳԻ ԿՕՄԻՏԵՆ (1908 ապրիլէն). — Սօփոյիսէն անդամավար 87 ժրանկ, Թրեօլայէն անդամավար 31, Սօփոյիսէն դասնվարնիքան համար 15, Սօփոլայէն դասավար. համար 20: Խմբեր՝ Սիլիան 3 ժր., Էս 19, Էս 21, Վրէժ 33, Շաֆէ 22, Մանուկեան 45, Էս 11, Հրայր 26, Բարկէն Սիւնի 21, Թարսու 22, ձուրնուլայի Մոկուճ 53, Թրեօլայի Վազր 46, Շիբոլիի Կայմակ 48, Իրօակի բաժնեգիներ 45: Գումար 568 ժրանկ:

ՎԱՌՆԱՅԻ ԿՕՄԻՏԵՆ (1908 ապրիլէն). — Հեփեալ խմբեր՝ Տարօ 4 ժր., Էս 23, Էս 58, Հայրիկ 6, Էս 34, Առիւծ 18, Էս 18, Կուկունեան 4, Էս 23, Էս 31, Յուսէփիական 3, Էս 36, Էս 52, Մարտիկ 9, Բոլոք 4, Ռեօնի 83, Անդրանիկ 13, Խ. Ս. 33, Էս 97, քարոյի 18, ծախսած հրատարակութիւններ 6. 60, Էս 26. 35: Գումար 571. ժր. 95 սանիսի:

ՍԻԿԵՆԻ ԵՆԹԱԿՕՄԻՏԵՆ (1908. ապրիլէն). — Հեփեալ խմբեր՝ Գարաբունարի Պեօ 46 ժր., Էս 63, Գարաբունարի Սերոբ փաւա 24, Էս 10, Գարաբունարի Հրայր 50, Բանէ-Մանուկի Ագաս 21, Էս 36, Բանէ-Մանուկի Իրայիս 20, Էս 31, Բանէ-Մանուկի Սերոբ փաւա 21, Էս 31, Եամպոյի Կայմակ 29, Սիլիկի Իրայսպիոր 42, Սերէնեան 34. 60, Անդրանիկ 28, Պայար 14, Խաբեր 16: Գումար 546 ժր. 60 սանիսի:

ՖԻԼԻՊԵԻ ԿՕՄԻՏԵՆ (1908 ապրիլէն). — Հեփեալ խմբեր՝ Պօրիստիկայի Նեւոնեան խումբի Ա. սանեակ 24 ժր., Էս 40, Բ. սանեակ 25, Թ. Բազարբոյի Ֆեդայի 28, Հասօլոյի Գեորգ Զաւու. 27, Գայանբոյի Անճուրաւց 15, Ֆիլիպի Հեթում-Գաղիկ 102, Էս 38, Վասպուրական 21, Տրոր 25, Վազգէն 69, Հրայր 30, Տարօ 23, Էս 24, Իրայսպիոր 24, Օր. Կարմիր Խաչի Ա. սանեակ 16. 50, Բ. սանեակ 23. 50, Արամեան 39, Վրէժի Ա. սանեակ 27, Բարկէն Սիւնի 42, Պասանեաց Վ. Մանուկեան 100, Հրայր Խ. հանգանակութիւն 19, Իրօակի բաժնեգիներ 57, տուգանքի Ս. Գ. 50: Գումար 889 ժր.:

ՓՈՐԹԻ ԵՆԹԱԿՕՄԻՏԵՆ (1908 ապրիլէն). — Հեփեալ խումբեր՝ Զորս Գանճ 28. 50 ժր., Եփրատ 30, Ղեւնդեան 18, Վազգէն 12, Գեորգ Զաւու. 10. 20, Աղուարդ 41, Սերոբ 40, Դեւեան 17. 90, Անդրանիկ 10, հրատարակութիւններ 34. 20, Իրօակի բաժնեգիներ 54, սեփարանի հասոյք 505. 85: Գումար 801. 65 ժր.: Գ. Խ. է գանձած որս 400 ժր., սեփարանի հասոյք 461. խմբեր՝ Դեւեան 4. 50, Էս 34. 60, Ղեւնդեան 4. 50, Գեորգ Զաւու. 27. 80, Զորս Գանճ 22, Աղուարդ 40, Եփրատ 42, Սերոբ 63, հրատարակութիւններ 42. 70: Իրօակի բաժնեգիներ 12: Ընդհանուր գումար 1154 ժր. 10 սանիսի:

ԴԱՆՈՒԲ ԵՆԹԱԿՕՄԻՏԵՆ (1908 ապրիլէն). — X սեփարանի հասոյք 454. 55 ժր., Էս 363. 60, Տիկ. Կարմիր Խաչի գանձանակ 96, Էս 98, խմբեր՝ Նոր Գար 60, Էս 69, Նեմուս 30, Էս 27, Ֆեդայի 24, Էս 33, Սերոբ-Աղբիւր 30, Էս 51, Սեպուհ 24, Էս 33, Զինուոր 21, Էս 21, Հագուլ 21, Էս 28. 50, Կարին 27, Էս 45, Վարագ 33, Էս 51, Արարատ 39, Էս 30, Կայմակ 21, Պարթե 31, Տիկ. Արաք 24. 50, տուգանք Գարայր 10, տուգանք Պողոստ 10, Եւր. Պալեան 5, Հալոգոտ 5, Կայմակ 5, Գարաւազ 5, Սարգիստ 5, Ռուբեն 5: Գումար 1836 ժր. 15 սանիսի:

ԵՓՐԱՏ ԵՆԹԱԿՕՄԻՏԵՆ (1908 ապրիլէն). — Սեփարանի հասոյքնի հաւելէ 3560. 75 ժր., նոր հաւելէ 819. 85: խմբեր՝ Պերուհի 156, Արծիւ 84, Տարօ 141, Տարսուիկ 126, Գայլ 116, Արեգակ 78, Արարատ 150, Աւսղիկ 120, հին անդամավարներ 35, Եփրատիսիւններ 18: Գումար 5404 ժր. 60 ժր.:

(Տնարկակի)